



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Խմբագրական

### Ազգ-բանակ գաղափարախոսությունը

Համարյա մեկ տարի է՝ ինչ քաղաքագետներն ու վերլուծաբանները, իհարկե զանգվածային լրատվական դաշտի հորդորներով և հարցումներին ի պատասխան, փորձում են դասեր տալ, դասեր քաղել և, ի վերջո, դասի առարկա դարձնել ապրիլյան պատերազմը և նրա հետեւանքները: Հայկական իրականության մեջ չի գտնվի որեւէ հանրային հարթակ, որտեղ քննարկված չլինեն այդ դասերը:

Բնականաբար, այդ դասերը որեւէ տեղ պետք է նաեւ կիրառվեն: Եվ դարձյալ բնական է, որ այդ կիրառման առաջին հարթակը պետք է լինի բանակը և, առավելաբար, առաջնագիծը: Հենց այդպես էլ եղավ. գործնական փորձարկումը տեսանք այս տարվա փետրվարին՝ թշնամու հետախուզական փորձերը ձախողելու պատկերավոր հաղորդումներում: Իսկ նախքան այդ առարկայական վկայությունը՝ ակնատեսը եղանք նաեւ կաղաքային լայնածավալ փոփոխությունների՝ բանակի հրամանատարական բարձր մակարդակից սկսած մինչեւ ստորին օղակներ: Այս նույն դասերի կիրառությանն է պատկանում նաեւ զինատեսակների ցուցադրությունը և օգտագործման թույլտվության ու անհրաժեշտության մասին արված հայտարարությունները:

Վերը նշվածը կարելի է անվանել ապրիլյան դասերից սովորածի իրականացման պատկերներ և քայլեր, որոնք կրում են տակտիկական բնույթ: Նման քայլերը չեն կարող իրենց հիմնավոր և մնայուն հետք թողնել, եթե չունենան գաղափարական հենք: Իսկ ապրիլյան դասերից սերտած գաղափարական հենքը պետք է արտացոլվի մտածողության մեջ, որի արդյունքում արդեն իսկ կծեւավորվի ռազմավարական քայլեր:

Ակնատեսն ենք նաեւ այդ ուղղությամբ կատարվող հիմնական քայլերի: Ազգ-բանակ գաղափարի հողումը և այդ ասպարեզում ծավալվող քննարկումները գաղափարական դաստիարակության հիմքերի ստեղծման հիմնական կմախքներ կարելի է անվանել:

Ազգ-բանակի հասկացությունը խորթ չէ Դաշնակցությանը: Դեռ իր ստեղծման օրվանից՝ Դաշնակցությունը լծվել է ազգը բանակի վերածելու գործին: Դրա վկայությունն է Ֆիդայական շարժումը 1890-ական թվականներին և դրա շուրջ ստեղծված համախմբումը ողջ հայության մակարդակով: Դրա վկայությունն է Հայաստանի Հանրապետության հիմնադրումը 1918-ին, որի հիմնաքարը դրել է դաշնակցական Արամ Մանուկյանը՝ ազգը բանակի վերածելով և դեպի ճակատ կոչ հնչեցնելով: Դա շոշափել ենք բոլորս 1990-ականներին Արցախում, երբ ուսուցիչը դառնում էր գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար և Դաշնակցության միջոցով կազմակերպվում էր համայն հայության բարոյական և նյութական աջակցությունը: Պատմական փաստերը վկայում են այն մասին, որ այն պահերին, երբ կարողացել ենք համախմբվել և բանակի վերածվել, հաղթանակն անխուսափելի է եղել:

Այժմ, երբ ազգ-բանակ գաղափարախոսությունը պետական մակարդակով է հրապարակ իջել, կրում է համազգային նշանակություն, շատ ավելի լայն տեսադաշտով պետք է մոտենալ հարցին: Գործնական առումով՝ բացի բուն խնդրի՝ բանակաշինության հարցից, պետք է նկատի ունենալ հրատապ լուծման կարոտ ազգային-պետական կարեւորագույն խնդիրներ ևս՝ որպես անվտանգության երաշխիքներ: Սահմանամերձ բնակավայրերի արագընթաց զարգացումը, ազգաբնակչության անվտանգության մակարդակի բարձրացումը և ընդհանուր նպատակների շուրջ հայության համախմբումն այն հիմնական խնդիրներն են եղել, որոնք երկրի անվտանգությանն ի խնդիր միշտ եղել են ՀՀ Դաշնակցության օրակարգում:

Մեզ նման ազգերի համար, որ դեռ ճամփա ունենք անցնելու, երբ դեռ ազգային ազատագրական պայքար ունենք մղելիք, անխուսափելի է ազգ-բանակ գաղափարախոսությունը և անշրջանցելի՝ այդ գաղափարախոսության հենքով քայլերի կիրառումը:



### Վառվող ջահերը մեր անմար հիշողությունն են խորհրդանշում

«Աննահանջ պայքար մինչեւ հատուցում» խորագիրը կրող ջահերը Ստեփանակերտում մեկնարկել է Ս. Հակոբ եկեղեցու բակից և ուղղվել դեպի Ստեփանակերտի հուշահամալիր: Ջահերը նախաձեռնել են ՀՀ Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեի և «Արամ Մանուկյան» ուսանողական միությունները, աջակցել է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Նախաձեռնությանը միացել են Արցախում գործող հասարակական կազմակերպությունները, հազարավոր ուսանողներ, աշակերտներ: Երթին մասնակցում էին նաեւ ՀՀ Դաշնակցության ԿԿ անդամներ, ԼՂՀ Աժ պատգամավորներ, պետական այլ այրեր:

ԼՂՀ Աժ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Լեռնիկ Հովհաննիսյանն իր խոսքում շեշտել է, որ սկսած 2000թ.՝ ՀՀ երիտասարդական միություններն Արցախում կազմակերպում են ջահերը: «1991-1994 թթ. Արցախյան պահանջատիրությունն արեւելահայությանը փրկեց նոր ցեղասպանությունից: Իսկ կողմնակալությունը պահպանողները նորից իրենց կամքի ուժով, հերոսությամբ և անձնագոհությամբ կանխեցին մի նոր ցեղասպանություն: Եվ այն հիմքը, որ դրվել է 1991-1994 թթ., ունենալու է շարունակական, և հայրենագրված արեւմտահայությունը տեր է դառնալու կորսված հայրենիքին», - ընդգծել է պատգամավորը:

«Այսօր նորից հավաքվել ենք, որ ձեռք ձեռքի բարձրացնենք մեր ոգեկոչման ու պահանջատիրության ջահերը, վառենք մեր հավատի մոմն ու միաժամանակ մեր միասնական ձայնը հնչեցնենք ի լուր աշխարհի: Այս վառվող ջահերը մեր անմար հիշողությունն են խորհրդանշում, իսկ մեր ազգի հիշողությունը մեզ քանիցս ցույց է տվել, որ փոքր ազգերի գոյության գրավականը հարատեւ ու միասնական պայքարն է, ուժի ու զենքի լեզուն: Երբ սա գիտակցել ենք ու գործել այդ գիտակցումով՝ հաղթել ենք, երբ ոչ՝ դառն

կորուստներ ենք ունեցել: Այսօր, առավել քան երբեք, մեզ այս գիտակցումով գործել է պետք: Թուրքիան ու Ադրբեջանը շատ հեռու են մարդասերացից և մարդուն վայել քաղաքակիրթ որոշումներ ընդունելուց, իրենց սեփական սխալը ճանաչելուց: Դա ապացուցված ճշմարտություն է: Այդ ճշմարտությունը մեզ ստիպում է, անկախ մեր քաղաքական հայացքներից ու գաղափարներից, բռնկեցվել համընդհանուր գաղափարի՝ ազատ, անկախ, միացյալ և, որ ամենակարեւորն է, հզոր Հայաստանի գաղափարի շուրջ: Եկեք դառնանք պայքարի մարտիկներ», - կոչ է արել ՀՀ Դաշնակցության Կարիք մարմնի ներկայացուցիչ Սեդրուհան Սուլեյմանյանը և հավելել, որ ապրիլը մեզ համար պիտի միայն արթնալու խորհրդանշի դառնալու օրը չէ, այլ համարյա ամբողջական խորհրդանշան է:

Նույն օրը ջահերով և մոմերով երթ է կայացել նաեւ Ասկերան քաղաքում:

### Հայոց ցեղասպանություն Օսմանյան Թուրքիայում. 102-րդ ապրիլ



Ուղիղ 102 տարի է անցել 1915թ. ապրիլի 24-ին սկիզբ առած այն մեծագույն ողբերգությունից հետո, որ իր բազմադարյա պատմության մեջ ապրել է հայ ժողովուրդը և որին երբեք անկանալի է եղել աշխարհի քաղաքակիրթ մարդկությունը: Ժամանակի այդ դարակազմիկ հողովույթում քանի-քանի նոր գարուններ ու ապրիլներ են ազգարարել....

Կարդացե՛ք 3-րդ էջում

### Ապրիլին գնացին Արցախ՝ ապրելու



Երգիչ, Արցախյան ազատամարտի մասնակից Մկրտիչ Մկրտչյանի հետ հանդիպում ենք Երեւանի սրճարաններից մեկում՝ իր 55-րդ տարեդարձի հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին: Երգերի միջոցով իր կյանքը վերապատմող Մակիչի հետ զրուցեցինք անմիջական ու երկար:

Կարդացե՛ք 5-րդ էջում

### Ապրիլի 24-ին նվիրված միջոցառումներ ամբողջ աշխարհում



Անշեղքաբար Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված քայլերը և անցկացվել, որին մասնակցել են տասնյակ հազարավոր մարդիկ:

Քայլերը սկսվել է Պան Պասիֆիկ այգու մոտից ու շարունակվել մինչև Թուրքիայի հյուսիսարևմտյան 1.5 կմ խորհրդանշական երթուղով, որտեղ եւ ակցիայի մասնակիցները հանրահավաք են անցկացրել՝ պահանջելով Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Երթի ընթացքում ելույթ ունեցավ Լուս Անշեղքի քաղաքապետ Երիկ Գարսեթին, ինչպես նաև՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆը, ով անցյալ ամիս ԱՄՆ Կոնգրեսին էր ներկայացրել բանաձեւ, որով խնդրում էր Կոնգրեսին պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Նախագահ Ֆրանսուա Օլանդը մասնակցել է Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը, որը կազմակերպել էր Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը (CCAF):

Օլանդը եւ նախագահի թեկնածու Մակրոնը ծաղկեպսակ են դրել Կոմիտասի հուշարձանին:

Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված արարողությունը տեղի է ունեցել Կոմիտասի հուշարձանի մոտ՝ Կանադայի հրապարակում:

**Վրաստան** - Մեկ տարվա ընդմիջումից հետո «Վրաստանի հայ համայնք» կազմակերպությունն ապրիլի 23-ին Թբիլիսիում շահերով երթ է իրականացրել: Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին կազմակերպված շահերով երթը սկիզբ է առել Թբիլիսիի Վակե թաղամասի Հաղթանակի զբոսայգուց, ապա անցել կենտրոնական Ճավճավաձե պողոտայով մինչև Թուրքիայի դեսպանատուն: Ջահերով, մոմերով, Հայաստանի եւ Վրաստանի պետական դրոշներով, ճանաչում, դատապարտում, հատուցում վանկարկելով՝ ցուցարարները պողոտայի մայրերով 15 րոպե տեւողությամբ երթ են իրականացրել:

«Ցեղասպանությունը պետք է ճանաչվի եւ դատապարտվի, որպեսզի այն չկրկնվի. այսօր մենք հենց այդ ճանաչմանը հասնելու նպատակով ենք կազմակերպել երթը», - ասել է «Վրաստանի հայ համայնք» կազմակերպության տեղեկատվական բաժնի պատասխանատու Ալեքսանդր Օհանյանը:

Արդեն Թուրքիայի դեսպանատան հարակից տարածքում երթի մասնակիցները փոքր հանրահավաք են անցկացրել: Ցուցարարները կոչով դիմել են նաև Վրաստանի կառավարությանը՝ «Մի կողմ դնել Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ունեցած հարաբերությունների կարելիությունը եւ ընդունել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը»:

**Արգենտինա** - Հայոց ցեղասպանության հիշատակումն օգնում է կանխել

նմանատիպ վայրագությունների կրկնությունը մարդկության պատմության ընթացքում: Այս մասին Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված պատարագի ժամանակ իր ելույթում հայտարարել է Արգենտինայի փոխնախագահ Գաբրիելա Միչետին:

«Երբ խոսում ենք Ցեղասպանության մասին, մենք նաև խոսում ենք մարդկության նկատմամբ գործած ժարձակման մասին», - նշել է նա՝ հիշեցնելով, որ Արգենտինան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը 2007-ին՝ ընդունելով՝ 26199 օրենքը:

21-ի երեկոյան Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյի Անկախության հրապարակից մեկնարկել է Ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված շահերով երթ: Տեղի հայ համայնքից հայտնում են, որ երթի հարյուրավոր մասնակիցներ շահերով, դրոշներով, ցուցապատառներով ու բարձրախոսներով քայլել են մայրաքաղաքի գլխավոր պողոտայով:

1.5 ժամ տևած՝ արդարության եւ պահանջատիրության երթի մասնակիցները քաղաքապետարանի բակում նաև մասնակցել են հատուկ արարողության: ՀՀ Երիտասարդական միությունն ընթերցել է հատուկ ուղերձ՝ դատապարտելով թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունն ու պատրաստակամությունն հայտնել շարունակելու պահանջատիրության ու արդար դատի համար մղվող համատեղ պայքարը՝ մինչև վերջնական ճանաչում ու հատուցում թուրքական իշխանությունների կողմից:

Վերջում՝ հայկական դրոշի գույներով բազմաթիվ փուչիկներ են արձակվել դեպի երկինք:

**Սիրիա** - Հայ երիտասարդական միության կազմակերպությամբ՝ հալեպահայությունը հավաքվել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության այգում՝ իր հավաքական բողոքն արտահայտելով Թուրքիայի բարբարոսությունների դեմ:

Բողոքի հավաքին ներկա են եղել հայ երեք համայնքապետերը, իսկամ կրոնավորներ, Սիրիայի խորհրդարանի անդամներ ու հարյուրավոր երիտասարդներ:

Հայկապայությունը Դամասկոսում ՄԱԿ-ի ներկայացուցչին հղած նամակում կոչ է արել դատապարտել Թուրքիային եւ պահանջել Հայոց ցեղասպանության ճանաչում ու արդար հատուցում:

Նամակում նաև ուշադրություն է հրավիրվել փաստին, որ թուրք դահիճը շարունակում է անպատիժ մնալ նաև Սիրիայում, մանավանդ՝ Հալեպում իր բարբարոսությունների համար: Հալեպահայերը կոչ են ուղղել՝ կասեցնել եւ ասնձել Թուրքիայի նորստանական նկրտումները:

**Լիբանան** - Հայոց ցեղասպանության 102-ամյակին ընդառաջ՝ Լիբանանում մի շարք միջոցառումներ են անցկացվել: Մեծաբուն Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի ոգեկոչումն սկսել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի պատգամով:

«Ժողովրդին կամքը՝ գոյատեւման պատմությունը՝ խորագիրը կրող ձեռնարկին Նորին Սրբությունը ներկայացրեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշ. Տ. Շահե Եպս. Փանոսյանը: Ձեռնարկին ներկա էին նաև պետական նախարարներ եւ երեսփոխաններ, Լիբանանյան եւ Հայկական կուսակցությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծ թվով քաղաքական, մշակութային, տնտեսական եւ ընկերային միությունների ներկայացուցիչներ, հոգեւորականներ, զինվորական-

ներ եւ լրագրողներ:

Լիբանանի, Հայաստանի եւ Լիբանանյան ուժեր կուսակցության քայլերգերի հոսնկայս ունկնդրությունից հետո՝ Հայոց ցեղասպանության 102-ամյակի ոգեկոչումը սկսվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հղած պատկերասփռու պատգամով:

Վեհափառ Հայրապետը ֆրանսերենով ողջունեց Լիբանանյան ուժեր կուսակցության՝ Ապրիլ 24-ին նվիրված հիշատակի հանդիսության կազմակերպումը եւ ասաց, որ Ցեղասպանությունը մարդկության դեմ գործված ոճիր է, իսկ մարդկության դեմ կատարված ոճրագործության պատիժը, ըստ միջազգային օրենքի, բարոյական, օրինական եւ քաղաքական հանձնառություն է, իսկ պատժից խուսափելը՝ անիրավություն եւ ցեղասպանության շարունակություն: Վեհափառ հայրապետը հայտնեց, որ ըստ միջազգային օրենքի՝ մարդկության դեմ գործված ոճիրները եւ մասնավորաբար այդ ոճիրների եւ Ցեղասպանության ճանաչումը անքակտելի են, այլ խոսքով՝ ճանաչումը ենթադրում է սխալի ուղղում:

Նորին Սրբությունը նաև նկատեց, որ հայ ժողովուրդը 20-րդ դարում գործված ցեղասպանության առաջին զոհն է, որ կշարունակի աննկուն կամքով արդարություն պահանջել, մինչ թրքական իշխանությունները կշարունակեն բռնի կերպով գործադրել իրենց ժխտողական քաղաքականությունը: Դժբախտաբար, ներկա իրա-

թեմակալ առաջնորդն իր խոսքն ուղղելով համախմբված հայրորդներին՝ կոչ ուղղեց հաստատակամ քայլերով շարժվել դեպի Թուրքիայի դեսպանատուն:

Ապա սկսվեց ժողովրդի լուռ եւ կարգապահ երթը դեպի Թուրքիայի դեսպանատուն: Մեկժամյա երթից հետո, կեսօրվա ժամը մեկին ժողովուրդը հավաքվեց Թուրքիայի դեսպանատան դիմաց եւ ժողովրդի լուռ երթը վերածվեց բողոքի կարգախոսեր վանկարկելով: Համախմբված հազարավոր հայրորդներ բռնկեցին վեր դեպի դեսպանատուն ու ծածանվելով դրոշը՝ հայերենով ու պարսկերենով վանկարկում էր. «Մահ Թուրքիայի ֆաշիստական կառավարությանը», «Արդարություն, արդարություն՝ մեր իրավացի կանչն է»:

Համահավաքի ընթացքում հրավիրվեց իր պատգամը հղելու Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ Կոնստանդնուպոլսի Կառնախայության պատգամավոր դուկտ. Կարեն Կանկարյանը: Նա պարսկերենով բացատրություն տվեց Օսմանյան կայսրության միջոցով իրականացված ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև ասորիների եւ հույների ցեղասպանությունների մասին: Պատգամավորը շեշտեց. «Մարդու դեմ իրականացված ոճրագործությունների դատապարտումն ամենավստահելի երաշխիքն է՝ կանխելու նորանոր ոճրագործություններ: Նա նաև մեջբերեց իսլամական հեղափոխության հիմնադիր առաջնորդ, հանգուցյալ էմամ Խոմեյնիի հիշյալ հայտարարությունը. «Իրանն այն



վիճակում միջազգային իրավունքները եւ մանավանդ մարդկային իրավունքներն ընդհանրապես՝ կշարունակեն պատանդ մնալ քաղաքական իրադրության: Վեհափառ հայրապետն ասաց. «Մենք կրնանք ուրանալ կամ անտեսել իրականությունը, բայց չենք կրնար մոռանալ կամ թաղել այն: Թուրքիան պետք է հարգի իր սեփական պատմությունը, փոխի իր ուրացման եւ ժխտողական ռազմավարությունը եւ ընդունի իրականությունը. այո՛, իրականությունը կնեղացնե, սակայն ի վերջո այն կառաջնորդի դեպի հաշտեցում եւ ապաքինում»:

**Իրան** - Հազարավոր թեհրանահայեր այս տարի եւս Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին իրենց խուռներամ շարքերով Ապրիլի 24-ին մասնակցեցին լուռ բողոքի երթին:

Ապրիլի 24-ի առավոտյան Թեհրանի Ս. Սարգիս Մայր եկեղեցում՝ ձեռնաբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանի, մատուցվեց եպիսկոպոսական հանդիսավոր ս. պատարագ եւ բարեխոսական աղոթք:

Ս. պատարագից եւ բարեխոսական աղոթքից հետո թափորը հայ սկաուտների կազմած խորխտ շարքերով շարժվեց դեպի եկեղեցու շրջափակում գտնվող Բյուրավոր Նահանգականների հուշարձանի մոտ, ուր կրոնական արարողությունից հետո

երկիրը չէ, որտեղ նոր ցեղասպանություն իրականանա հայության նկատմամբ, եւ իրանցիները եւս նման ժողովուրդ չեն»:

Պատգամավորն իր շնորհակալությունը հայտնեց Իրանի պետական այրերին եւ կարգապահական ուժերին, որոնք առիթ ընձեռնեցին իրականացնել բողոքի երթը: Ապա հրավիրվեց թեմակալ առաջնորդն՝ իր պատգամը հղելու: Թեմակալ առաջնորդը գնահատանքի խոսք ուղղեց ժողովրդին իր խուռներամ մասնակցության համար եւ նշեց. «Ուզում եմ իմ խոսքն ուղղել Իրանի Իսլամական Հանրապետության ողջ ղեկավարությանը, որոնք հակառակ մեր տարածաշրջանում տիրող ահաբեկչական շարժումներին, հակառակ տարածաշրջանում տիրող անորոշությանը, Իրանը պահում են խաղաղ, հանգիստ պայմաններում եւ, ահավասիկ, այդ խաղաղ պայմաններում առիթ է տրվել մեզ, որպեսզի այստեղ գալով՝ համախուռմ կերպով արտահայտենք այն, ինչ-որ մեք, իբրեւ պահանջատեր ժողովուրդ, զգում ենք եւ ապրում»:

Սրբազան հոր հղած պատգամից հետո ընթերցվեց օրվա 10 կետանոց բանաձեւը: Վերջում՝ ժողովուրդը վերամբարձ բռնկեցներով երգեց «Սարդարապատ» երգը:

Պատրաստեց Լիլիա ԲԱՂԻՅԱՆԸ

### Հայոց ցեղասպանություն Օսմանյան Թուրքիայում. 102-րդ ապրիլ



Ուղիղ 102 տարի է անցել 1915թ. ապրիլի 24-ին սկիզբ առած այն մեծագույն ողբերգությունից հետո, որ իր բազմադարյա պատմության մեջ ապրել է հայ ժողովուրդը և որին երբեք ականատես է եղել աշխարհի քաղաքակիրթ մարդկությունը: Ժամանակի այդ դարակազմիկ հոլոկոսթում քանի-քանի նոր գարուններ ու ապրիլներ են ազդարարել երկիր մուրակի ծաղկուն վերածնունդը, բայց աշխարհասփյուռ հայ ժողովրդի և նրան ցավալից շատ այլ ժողովուրդների հիշողության մեջ անանց, անմոռաց է իր պատմական բնօրրանում մի ամբողջ ազգի բնաջնջման այդ զարհուրելի իրողությունը՝ իր շուրջ 2 միլիոն անմեղ նահատակներով:

Օսմանյան Թուրքիայում, Արևմտյան և Արևելյան Հայաստանում հայ ազգաբնակչության գանգվածային ոչնչացման այդ ահռելի ծրագիրը, որ օսմանյան ցեղասպան կայսրության երիտթուրքական վարչախումբը, ապա և նրան հաջորդած քեմալական հանրապետության կառավարությունը հետեւողականորեն իրականացրել են 1915-1923 թվականներին, չունի իր նախադեպ-նմանակ մարդկության ողջ պատմության ընթացքում: Նորվեգացի մեծ մարդասեր, հայ ժողովրդի ունակ հարված իրավունքների անխոնջ պաշտպան Ֆրիտյոֆ Նանսենի՝ 1916թ. գրառած վկայությամբ. «1915 թվականին սկիզբ առած այս սարսափներն իրենց հավասարը չունեն պատմության մեջ: Աբդուլ Համիդի ջարդերը դատարկ բան են թվում ժամանակակից թուրքերի իրականացրած կոտորածի համեմատությամբ»: «Թուրքերը, դարձյալ նույն թվականին գրել է ռուս մեծ բանաստեղծ Վալերի Բրյուսովը, շարունակում էին իրենց նախկին քաղաքականությունը՝ կանգ չառնելով այնպիսի վիթխարի ջարդերի առաջ, որպիսիք կատարել էր հանդգնում անգամ Լենկթեմուրը»: «Նախկին քաղաքականություն» ասելով՝ նա, անշուշտ, նկատի ուներ արյունարբու սուլթան Համիդի օրոք Օսմանյան Թուրքիայում 1878-1914թթ., այդ թվում, առանձնապես, 1894-1896թթ., ապա և 1909թ. Ադանայում իրագործված հայկական ջարդերը, որոնց զոհ են գնացել այդ կայսրության հարյուր հազարավոր հայ քաղաքացիներ՝ կին ու տղամարդ, ծեր ու մանուկ: «Իրականում դա բնաջնջման մի նոր եղանակ էր: Երբ թուրքական իշխանությունները հրաման էին տալիս, փաստորեն, նրանք ամբողջ մի ազգի մահավճիռ էին արձակում», - 1918թ. գրել է Թուրքիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան Յենրի Մորգենթաուսը:

Այս առումով հատկանշական է 1918-1920թթ. թուրքական զորքերի արշավանքը դեպի Արևելյան Հայաստան և Արևմտյան Մերձկասպիայի տարածքներ՝ ներկայիս Ադրբեջան, որտեղ իրի ու սրի

մատնվեցին հարյուրավոր բարեշեն հայկական կամ հայափոխ բնակավայրեր, այդ թվում՝ Շիրակի դաշտի բնակավայրերը՝ Գյումրի քաղաքն իր շրջակա գյուղերով, հայկական Նախիջեանը, Արցախի մշակութային ու քաղաքական կենտրոն Շուշի, Արեշ, Աղդաշ Գյուլջայ, Շամախի, Նուխի, Գանձակ գավառները, Բաքուն: Միայն Բաքվում՝ 1918թ. սեպտեմբերի կեսերից սկսած, երբ թուրքական բանակը ներխուժեց այդ հայափոխ քաղաք, յաթաղանի զոհ դարձավ ավելի քան 30 հազար հայ: Իսկ անա Շուշի բերդաքաղաքում՝ 1920թ. մարտի 23-ի կոտորածների ընթացքում, նահատակվել են, տարբեր աղբյուրների տվյալներով, 8-10 հազար հայ բնակիչներ, միաժամանակ, լրիվությամբ իրի մատնվեցին և ավերվեցին քաղաքի հայկական թաղամասերը:

Իրար փոխարինելու եկած թուրքական իշխանությունները՝ սուլթանական, երիտթուրքական, թե քեմալական, այն հանցավոր գաղափարին էին հետամուտ, թե հայ ժողովրդի ազգասպանությամբ կարող են միջազգային քաղաքական օրակարգից ընդմիջտ դուրս մղել հայկական հարցը, առաջնորդվելով՝ «չկա հայ՝ չկա հայկական հարց» կարգախոսով: Իշխանափոխությունը, իշխանության կառույցներում սերնդափոխությունը, անկասկած, որեւէ եական փոփոխություն չի կատարել թուրքական ղեկավարության պետական քաղաքականության մեջ՝ ուղղված երկրի քրիստոնյա և այլադավան ազգերի ու ժողովուրդների՝ հայերի, հույների, ասորիների, եզդիների վերացմանը և կամ, որպես նվազագույն ծրագիր, նրանց մահմեդականացմանն ու ուժացմանը: Հատկանշական է, որ նույն այդ քաղաքականությունը շարունակվել է նաև 20-րդ դարի հետագա տասնամյակներում, և այժմ էլ՝ 21-րդ դարի առաջին տասնամյակներում, իրականացվում է այլ դրսեւորումներով ու գործիքակազմով: Արդյո՞ք այդ չեն վկայում մերօրյա իրողությունները Մերձավոր Արևելքի հայաշատ երկրներում, մասնավորապես՝ Իրաքում, Սիրիայում, որտեղ նույն թուրքական քաղաքականությունն իրագործվում է «իսլամական պետություն» կոչեցյալ ահաբեկչական խմբավորումների միջոցով, որոնց ավազակային արշավանքների թիրախներից են նաև անցած դարասկզբի Մեծ եղեռնից մազապարծեղ այդ արաբական պետություններում վերածվել սիրիական երկրորդ խոշորագույն բնակավայրը՝ հայափոխ ու հայաշունչ Հալեպ քաղաքն իր եկեղեցական, կրթական, մշակութային, մարզական և այլ հայկական կառույցներով: Մի՞թե նույն թիրախավորմամբ չի ավերակների կույտի վերածվել Հայոց մեծ եղեռնի Սրբոց Նահատակաց հուշահամալիրը Սիրիայի Դեյր-էլ-Չոր քաղաքի Ալ Ռաշտի թաղամասում:

Հայոց ցեղասպանության տարիներին և հետագա ժամանակներում թուրքական այլատյաց քաղաքականության գոհ են դարձել նաև քրիստոնյա դավանանքի, անգամ իսլամադավան արաբները: Այս իմաստով՝ 1915-ի նույն ողբերգական ապրիլին ահա թե ինչ է ասել Մեծ եղեռնի գլխավոր դահիճներից մեկը՝ երիտթուրքական կառավարության ներքին գործոց նախարար Էնվեր փաշան իր հանցակից՝ ռազմական գործոց նախարար Ջեմալ փաշային. «Թուրքական կառավարությունն իր ազատությունն ու արժանապատվությունը չի կարող վերագտնել այն-

բան ժամանակ, մինչև որ թուրքական կայսրությունը չազատվի հայերի և լիբանանցիների գոյությունից: Առաջինին սրով ջարդեցին, իսկ երկրորդին սովի միջոցով պիտի ոչնչացնենք»: Ավելացնեմ, որ լիբանանցիներ ասելով՝ թուրք դահիճը նկատի ուներ արաբ բնակչությանը:

Ներկայումս՝ արդեն տասնամյակներ ի վեր, նույն ճակատագրին են դատապարտված նաև մահմեդական քրդերը, ում նախնիք իրենց ճնշող մեծամասնությամբ անցած դարասկզբի հայոց կոտորածների ժամանակ, ցավոք, կույր գործիք էին դարձած թուրքական ցեղասպան իշխանությունների ձեռքին: Նրանք երեւի թե անտեղյակ էին և կամ, տեղյակ լինելով հանդերձ, հավկուրորեն չէին պատկերացնում ու չէին սպասում, որ ոչ հեռու ապագայում նաև իրենց գալիք սերունդներին և վերաբերում երիտթուրքական «Միություն և առաջադիւթություն» կուսակցության գաղափարախոս, պանթուրքիզմի գաղափարի շատագույն Նազիմ բեյի ուղերձը: «Սպանվեցին և ջարդերը կարելու են, որովհետեւ թրքական ծագում չունեցող որեւէ տարր, ինչ ազգի էլ որ նա պատկանի, պետք է ոչնչանա», - տակավին 1915-ի փետրվարին ասել է պանթուրքիզմի այդ շատագույն:

Ընդ որում, հարկ է նշել, որ Օսմանյան Թուրքիայում ազգային և կրոնական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայ ժողովրդի գոյության իրավունքի կոպիտ ոտնահարումները, ինչպես որ ներկայումս քրդերին, մշտապես իրականացվել է աշխարհի գերտերությունների անտարբեր ու անկարեկից հայացքի առջև: Հիշենք Մեծ Բրիտանիայի վարչապետ Նոլսբերիի հայտարարությունը, որ նա կատարել է 1896թ. ապրիլի 30-ին՝ Լորդերի պալատում, այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանում մոլեգնում էին սուլթանահամոզյան ջարդերը: «Հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար, - ասել է նա, - պետք է գերծ մնալ ռազմական միջամտությունից, քանի որ անգլիական նավերը չեն կարող բարձրանալ Տավրոսի լեռները»:

Իր հերթին, լինելով Օսմանյան Թուրքիայի դաշնակիցն Առաջին աշխարհամարտում, կայսերական Գերմանիան նույն կերպ Թուրքիայի ներքին գործն է համարել հայ բնակչության բնաջնջումը՝ գտնելով, որ այն ենթակա չէ միջազգային միջամտության: Ահա թե ինչու լկտիության աստիճան ինքնավար ժամանակ թուրքական զորքերը շատ հաճախ գործում էին գերմանացի սպաների խորհրդատվությամբ և կամ նրանց ուղղակի հրամանատարությամբ: Արդյո՞ք ենց այդ ժամանակ չէր հասունանում Հրեական ողջակիզման՝ Հոլոքոստի գաղափարը, որ հետագայում իրագործեց ֆաշիստական Գերմանիան: «Կարիք չկա ուշադրություն դարձնել հասարակական կարծիքի վրա, քանզի ո՞վ է հիմա հիշում Թուրքիայում հայերի բնաջնջման մասին», - դեռես 1939թ. օգոստոսին հայտարարել էր Ադոլֆ Հիտլերը:

Ավելի քան մեկուկես տասնամյակ անց, 50-ական թվականներին գերմանական իշխանությունները, իհարկե, ճանաչեցին հրեա ժողովրդի ցեղասպանությունը, իսկ անցյալ դարասկզբի ողբերգական իրագործություններից ավելի քան մեկ դար անց ընդունեցին իրենց մեղսակցությունը հայկական ջարդերում՝ 1916 թվականի հունիսի 2-ին ճանաչելով Հայոց ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում:

Այս համատեքստում արժե հիշատակել

նաև Իոսիֆ Ստալինի խոսքը 1921թ.՝ Խորհրդային Միությունում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուատ Ջեբետյանին: «Հայաստանի հարցը դուք ինքներդ լուծել եք: Եթե դեռ չլուծված ինչ որ բան է մնացել, ապա դա նույնպես ինքներդ լուծեք, իսկ հետո տեղյակ պահեք մեզ», - ասել էր այն ժամանակ դեռևս Ռուսաստանի կոմկուսի կենտկոմի գլխավոր քարտուղարը: Այս էլ ահա, այսպես ասած՝ «մերոնք»: Թեկուզ, իրոք, ինչ մերոնք, երբ այլևս գաղտնիք չէ նաև ցարական, թե խորհրդային Ռուսաստանի, Էական չէ, մեղքի բաժինն Արեւմտյան և Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների եղեռնագործության մեջ: Այնուամենայնիվ, նշենք՝ Խորհրդային առաջին տարիներին՝ 1995թ., Ռուսաստանի Պետական դուման նույնպես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Բնականաբար, առանց մեղքի ռուսաստանյան բաժնի:

Առհասարակ, աշխարհը կարծես թե զարթում է լեթարգիական քնից՝ աչքից հեռացնելով անցած դարասկզբին հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգության հանդեպ անտարբերության քողը: Միջազգային հանրությունը, հակազդելով հետօսմանյան շրջանի թուրքական բոլոր, առանձնապես ներկայիս իշխանությունների ժխտողական քաղաքականությանը, հետզհետե՝ պետություն առ պետություն, ներգրավվում է Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության՝ որպես անառարկելի իրողության, ճանաչման գործընթացում:

Սակայն հարկ է նշել, որ Մեծ եղեռնի միջազգային ճանաչման այս գործընթացը, համապատասխանելով հանդերձ հայրենի բնօրրանում ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի բարոյական, նյութական ու հոգային պահանջատիրությանը, այնուամենայնիվ, առավելապես բխում է նույն միջազգային հանրության շահերից: Քանզի հայոց պատմական արդարության ճանաչումն ու վերականգնումը եւս մեկ առիթ ու կարելու պայման է, որպեսզի աշխարհը հետայսու գերծ մնա մարդկության դեմ ուղղված հնարավոր գանգվածային ոճրագործություններից՝ նվազեցնելով դրանց հավանականության աստիճանը ներկա և գալիք սերունդների կյանքում: Այլապես, եթե չլինել կամ աշխարհը միաբերան դատապարտեր Հայոց եղեռնն Օսմանյան Թուրքիայում, ապա հազիվ թե այն կրկնվեր ֆաշիստական Գերմանիայում՝ հրեաների, գնչուների, լեհերի հանդեպ, և կամ հետագա տասնամյակներում՝ Ռուանդայում, Կամբոջայում, Պաղեստինում, Կիպրոսում, Հարավսլավիայում: Կամ թե հենց մեր հարեան երկրում՝ Ադրբեջանում, որի կես միլիոնից ավելի հայ բնակիչներն անցյալ դարավերջին՝ 1988-1990թթ., ենթարկվեցին բռնատեղահանման ու արյունալի ջարդերի, ասել է թե՛ դարձյալ ցեղասպանության: Ընդ որում՝ նույն ռճով ու ձեռագրով, նույնպես պետականորեն և համազգային ներգրավմամբ, ինչպես որ Օսմանյան Թուրքիայում էր: Աշխարհը չպետք է մոռանա, որ ընդօրինակվելու հավանականություն ունի ոչ միայն լավ, այլև, առավելապես, վատ օրինակը, վերջին պարագան, մանավանդ, հանցավոր թողություն և անպատժելիության պայմաններում: Ի վերջո, մենք բոլորս պատասխանատու ենք մեր երկրագնդի ժողովուրդների ճակատագրի համար:

Հավերժ հիշատակ Հայոց ցեղասպանության մեր սրբադասված նահատակներին, աշխարհում տեղի ունեցած բոլոր ցեղասպանությունների զոհերին:

Հիշում ենք և պահանջում:

**Միքայել ԳՆՅՍՆ**  
**Քաղաքական վերլուծաբան**

### Հայրենիք

«...Կարելի է ասել, որ հայը խաղաղության համար աշխարհի ամենամեծ ժողովուրդն է: Հայը չի հավատում պատերազմին եւ որքան համար պատմական ամեն դեպք ընդունում է իբրեւ անակնկալ, իբրեւ «անամպ երկինքից ժայթքող կայծակ»: Նա տակավին չի հասկանում կենսաբանաբարոյական այս երկու ճշմարտությունների իմաստը՝ խաղաղության ժամանակ պետք է նախապատրաստվել միայն մեկ բանի համար՝ պատերազմի, իսկ պատերազմի ընթացքին կամենալ միայն մեկ բան՝ հաղթանակ»:

Այս տողերի հեղինակը հայ անվանի իմաստասեր Հայկ Ասատրյանն է, ով ավելի քան 70 տարի առաջ գրել է «Յեղ եւ Հայրենիք» ամսագրում:

Իսկ ի՞նչ է փոխվել: Փոխվել են միայն ժամանակները, էլի մենք նույն ենք մնացել: Արցախյան առաջին հաղթական պատերազմից հետո եղավ 2016թ. ապրիլյան պատերազմը: Մենք պատրաստ էինք այդ պատերազմին: Միայն քչերը կարող են ասել՝ այդ: Շատերն էլ կասեն մենք հաղթեցինք, քանի որ միաբանվեցինք ազգովին, դարձանք ազգ-բանակ: Բայց, հետաքրքիր է, ի՞նչը մեզ միաբանեց՝ ինքնապաշտպանության բնագոյը, թե՞ թուրք-արդեշանցին: Միաբանվելու համար ո՞ւմ հայտնեք մեր երախտագիտությունը:

Ցանկանա՞ծ ազգ միաբանվում է մի հստակ գաղափարի շուրջ: Եթե այդ գաղափարը հայրենիքը չէ, ապա ո՞րն է: Իսկ ո՞րն է հայի հայրենիքը: Միանգամից կարելի է ասել՝ Հայաստանը եւ վերջ: Սակայն, արդյո՞ք յուրաքանչյուր հայ կթավարարվի այդ պատասխանով: Հայաստանը հայի համար սիրելի բառ չէ միայն, այլ հասկացողություն է, ինչպես նաեւ՝ իղծ, երգանք, կարոտ, ցավ, տառապանք եւ հավատի անսպառ աղբյուր: Հայրենիքը վտանգի պահին ավելի է քաղցրանում, հարազատանում... Իսկ մեր հայրենիքն արդյո՞ք վտանգի մեջ չէ:

Բնության մեջ գարգացման ենթակա ամեն մի արարած ունի հայրենիք: Բազմազանությամբ ու խայտաբղետությամբ աչքի ընկնող բույսերը եւ կենդանիներն ունեն աճման ու զարգացման, բազմացման ու տարածման առավել նպաստավոր պայմաններ պահովող միջավայրերը՝ հայրենիքները: Արեւադարձային գոտում աճող բույսերն առանց ջերմոցային պայմանների հնարավոր չէ աճեցնել այլ գոտիներում, մասնավորապես՝ Սիբիրում: Եվ, հակառակը, սիբիրյան խստաշունչ ձմռանը հարմարված բույսերը արեւադարձային գոտում կոչւնան: Նույնը վերաբերում է կենդանական աշխարհին: Նախախնամությամբ այդ օրենքը

տարածվում է նաեւ մարդկանց վրա, բայց գոյություն ունի մեծ տարբերություն. մարդու կյանքը կենդանականի եւ հոգեւորի միասնությունն է: Այդ պատճառով էլ մարդու հայրենիքի գաղափարը բաժանվում է երկու մասի եւ հանդես է գալիս որպէս նյութականի ու հոգեւորի միասնություն:

Հայրենիքի գաղափարը հատուկ է նույնիսկ ամենահասարակ, կիսակիրթ ազգերին, բայց նրանց գաղափարը սահմանափակ է: Հայրենիք ասելով՝ նրանք հասկանում են իրենց ընտանեկան օջախները, հայրենի քաղաքները կամ գյուղերը, հողն ու ջուրը: Զաղաքակրթության զարգացմանը զուգընթաց՝ աստիճանաբար ընդարձակվել եւ ազգերի մեջ տարբեր բովանդակություն է ստացել հայրենիքի գաղափարը: Ընդհանրապէս, ազգայնության տարրերն են՝ արյան, հայրենի երկրի, լեզվի, պատմության, ավանդույթների, սովորույթների եւ պետական կազմակերպության միությունները: Նշվածներից, սակայն, արտաքին երեւույթները չեն այնքան կարեւոր, որքան հոգեւոր կյանքի եւ քաղաքակրթության գիտակցության միությունը: Այս տարրերից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի ազգի բնական զարգացման համար, բայց այդ զարգացման ելակետը հոգեւոր կրթությունն է եւ նրանից բխած գիտակցությունը, որ սերտ կերպով միմյանց հետ է կապում ազգեցության անդամներին: Այդ գիտակցությամբ է որոշվում, թե ազգը ինչ հոգեւոր բարիք եւ ժառանգություն ունի, որ թանկ է հանրության համար: Եվ այդ ժառանգությունն է ազգի հոգեւոր հայրենիքը, որով նա ապրում է ոչ որպէս մի բույս կամ կենդանի, այլ՝ բանական եւ հոգեւոր արարած:

Զաղաքակիրթ ազգի համար սովորական իմաստով՝ հայրենիքից բացի կա մեկ այլ՝ հոգեւոր, վերացական հայրենիք: Հոգեւոր կյանքը եւ քաղաքակրթությունն էլ ունի իր հայրենիքը՝ ճիշտ այն նմանությամբ, ինչպէս բույսերի, կենդանիների եւ մարդկանց նյութական հայրենիքն է: Ամեն հողի վրա նույն գաղափարը աճել չի կարող: Նույնիսկ բարոյական եւ կրոնական ընդհանուր գաղափարները տարբեր բնավորությունն են ձեւակերպում եւ ստանում զանազան երկրների բնակիչների մեջ: Զրիստոնեությունը տարբեր բացատրությունն են կազմակերպությունն է ստացել տարբեր ազգերի մեջ, թեւեւ արմատով նույնն է ամեն տեղ: Դավանաբանական եւ ծիսական կարգերի տարբերությունները եկեղեցիների մեջ, ընդհանրական եկեղեցու բաժանվելը ազգային եկեղեցիների Աստծո տնօրինության եւ պատմական, բնական պարագաների հետեւանք էին

եւ ոչ՝ այս կամ այն անձի կամայականություն: Պատմականորեն հետեւելով ժամանակակից ազգերի քաղաքակրթության եւ կրոնների զարգացման ընթացքին՝ համոզվում ենք, որ տարբեր են Արեւելքի եւ Արեւմուտքի քաղաքակրթությունները, ուրիշ է քրիստոնյա ազգերի ընդհանուր քաղաքակրթությունը, եւ ուրիշ՝ մահմեդական, բուդդայական եւ հեթանոս ազգերինը: Նույնիսկ այս ընդհանուր խմբերի քաղաքակրթություններն էլ իրենց ստորաբաժանումներով տարբերվում են միմյանցից:

Ամեն ազգի հոգեւոր կյանք իր բնորոշ կողմերն ու հատկություններն ունի: Ինչպէս բույսը իր հատուկ կլիմայական պայմաններում միայն կարող է զարգանալ եւ շարունակել իր տեսակը, այդպէս էլ յուրաքանչյուր ազգի հոգեւոր կյանքը իր բնորոշ հատկությունները պահել եւ զարգանալ կարող է իր բնիկ հողի վրա:

Իսկ ո՞րն է հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը: Այս հարցի պատասխանը յուր ժամանակին այնքան սպառնչ է սովել Գարեգին Ա կաթողիկոս Յովսէփյանը, որ ստիպված ենք ամբողջությամբ մեջբերել. «Հայ ժողովրդի գիտակցված քաղաքակրթությունը սկսվում է քրիստոնեության հաստատությամբ եւ նրա դրոշմն է կրում իր զարգացման ամբողջ ընթացքում: Հայոց մատենագրության առաջին հիշատակարանը Սուրբ Գրքի թարգմանությունն է, որի վրա կրթվել են բազմաթիվ սերունդներ: Հինգերորդ դարից առաջ ի՞նչ քաղաքակրթություն ենք ունեցել՝ հայտնի չէ մեզ, եղած հեթանոսական քաղաքակրթությունը ձուլվել է քրիստոնեականի հետ: Հայոց հոգեւոր կյանքի պատմությունը գրեթե նույնատիպ է մեր եկեղեցու զարգացման պատմության հետ: Հայ ժողովրդի մատենագիրներն ու վարժապետները միեւնոյն ժամանակ եկեղեցու սպասավորներն են: Գիտությունն ու արվեստը հայ ժողովրդի մեջ ծագել եւ զարգացում են ստացել եկեղեցու շրջանակի մեջ: Հայոց ճարտարապետության մասին գաղափար ենք ստանում նախնայաց թողած վանքերի ու եկեղեցիների մնացորդներով: Հայոց քանդակագործությունը՝ որմնաքանդակներ, խաչքարեր, ելուղավոր պատկերներ, նկարչության մնացորդներ, նույն վանքերում եւ նրա պատերի վրա պետք է որոնել: Մանրանկարչության արվեստը ծաղկել է հայ վանականների ձեռքով եւ պահվել է բազմաթիվ ձեռագրերի մեջ: Հայ ժողովրդի մանր արվեստների մասին՝ ձեռագրած, ոսկերչություն, փայտի քանդակագործություն եւ այլն, գաղափար ենք ստանում հին եկեղեցիներում եւ վանքերում պահված սրբազան անոթներից ու գեղատեսիլից: Եկեղեցա-

կան երգեցողությունը սերնդեսերունդ ավանդել եւ պահպանել է մեր ժողովրդական եղանակները: Մեր նախնայաց կրթաբանները վանքերն են եղել՝ իրենց վանականներով: այստեղ ուսում եւ դպրություն են ստացել ոչ միայն եկեղեցու պաշտոնյաները, այլեւ արքայազներ, իշխաններ եւ հասարակ ժողովրդի որդիք: Վանքերն են պահել մեր նախնայաց քաղաքակրթական մնացորդները՝ հնությունների եւ ձեռագրերի ժողովածուներ, որոնց ուսումնասիրությամբ հնարավոր է գաղափար կազմել մեր անցյալ կյանքի եւ պատմության մասին:

Եթե իրավ է մեր ասածը, թե հոգեւոր կյանքով ապրող ազգերը սովորական, երկրավոր հայրենիքից գատ ունեն մեկ ուրիշ, վերացական հայրենիք, նրա անցյալ քաղաքակրթությունն ընդարձակ մտքով, ուրեմն՝ հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանյայց եկեղեցին է: Այս հայրենիքում միայն կարող ենք հոգեւոր ձեռով աճել ու զարգանալ, ինչպէս որոշ կլիմայի եւ տեղի հատուկ բույսն ու կենդանին: Մեր անցյալը ուրանալ չենք կարող, եթե տգիտության եւ միակողմանի հասկացողության թանձր մաշխուղը չի նստել մեր հոգու վրա»:

Ո՞րն է հայի նյութական հայրենիքը: Այս հարցի պատասխանը պետք է որոնել մարդկության պատմության ոլորաններում՝ սկսած Նոյից մինչեւ Հայկ Նահապետ, եւ մասնավորապէս՝ բաբելոնյան աշտարակաշինությունից հետո: Հարցին առնչություն ունի Պողոս առաքյալի՝ Արիսպագոսի մեջ արտասանած ճառի հետեւյալ հատվածը. «Մեկ արյունից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակվեն մտքով երկրի երեսին, հաստատեց նախակարգյալ ժամանակները եւ դրեց նրանց բնակության սահմանները, որ փնտրեն Աստծուն, որպէսզի, թերեւս, խորխափեն դեպի նա, գտնեն նրան...»: Հայի բնակության սահմանները, ինչպէս հայտնի է պատմությունից, գտնվում են Հայկական բարձրավանդակում: Հայ ժողովրդի նյութական հայրենիքը մտովի կարելի է բաժանել երկու մասի՝ Իղծերի հայրենիք (Մեծ Հայք, Փոքր Հայք, Կիլիկիա) եւ Առարկայական (շոշափելի) հայրենիք (Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, Ուտիք, Ջավախք, Նախիջեւան):

Հայ ժողովրդի ամբողջական հայրենիքը նյութական եւ հոգեւոր հայրենիքների միասնությունն է:

Միակ բանը, որ բոլորիս համար ընդհանուր է՝ Հայրենիքն է: Ուստի, եկեք սիրենք մեր հայրենիքը եւ համախմբվենք ամբողջական հայրենիքի գաղափարի շուրջ:

Արմեն ՄԱՐԳՍՅԱՆ

### Չարած ապրիլից մինչեւ մերօրյա ապրիլ



Ապրելու ապրիլը 1915 թվականին սեւ էր հագել, սեւ էր հագել մի ամբողջ անպաշտպան ազգի համար: Հայոց կենաց ծառը զարնան ծաղկունքին տերեւաթափվելու էր... 1,5 միլիոն անմեղ հայերը պիտի քշվեին անապատներ ու ոչնչացվեին աշխարհի անտարբեր աչքի առաջ: Պիտի գլխատվեր մտավորականության սերունքը՝ Գրիգոր

Չոհրապ, Սիամանթ, Ռուբեն Սեւակ, Թվկատիկ, Երուխան... Թուրքերը պարզապէս չէին կարողանում մարսել այն իրողությունը, որ հայերը քաղաքակրթության ու առաջադիմության կրողներն էին...

Անցյալ ու ներկա կորուստների համար վրեժխնդիր լինելու պարտավորվածության զգացումն է մեզ առաջ մղել դեպի Շուշիի բարձունքները, այստեղից սկսելու մեր ինքնահաստատումը, վանելու դատապարտվածության վաղեմի բարդույթը, ազգային արժանապատվության զգացումը գերադասելու ամեն ինչից վեր, նույնիսկ՝ սեփական կյանքից: 1992 թվականի մայիսի 9-ի Շուշիի հաղթարշավով առաջին անգամ հաղթահարվեց միշտ պարտված լինելու, զոհի բարդույթը: Ճիշտ է, մինչ այդ ունեցել էինք փոքր հաղթանակներ, բայց Շուշիի ազատագրումն իրոք ազգովի հաղթանակ էր, որի 25-ամյակը շուտով կտոնենք: Շուշիի հերոսամարտը 1915 թվականի Մուշի, Վանի, Մատուռի, Շատախի, Շապին Գարահիսարի, Մուսա Էռան ինքնապաշտպանական հերոսամարտերի շարունակությունն էր: Սրանով դրվեց հաղթանակների սկիզբը, կամավորական հիմունքներով միավորումներից անցում կատարվեց Արցախի կանոնավոր բանակի ստեղծմանը: Թշնամական գերությունից ազատագրվեց Մարտակերտը, սկիզբ դրվեց հայոց բանակի հաղթարշավին:

Սակայն նեղ թշնամին չկարողացավ մարսել իր պարտությունները եւ նոր դավեր նյութեց... Եղավ 2016 թվականի ապրիլը... Նորից գոհեր, նորից արյուն... Արմենակ Ուրֆանյաններ, Ռոբերտ Աբաջյաններ, Զարամ Սլոյաններ, Ադամ Սահակյաններ, Նորայր Հաջյաններ... Անկախության սերունդը հայրենասիրության նոր դասեր տվեց՝ ապացուցելով, որ հայրենիք ոչ պակաս հայրենասեր է ու պատրաստ կռելու իր բաժին հաղթանակները: Ապրիլյան քառօրյան նաեւ հայության համախմբման յուրօրինակ շքերթ էր, երբ աշխարհի բոլոր ծագերից եկան խնչտպանելու համայն հայության թիվ մեկ խնդիր Արցախի դարպասները: Իրենց հոգու կանչով եկան պաշտպանելու հայի պատիվը... Ինչքան էլ որ Լեւոն

Տեր-Պետրոսյաններն իրենց նախընտրական վերլուծություններում քաղաքական դիվիդենտներ շահելու նպատակով առաջ քաշեն «Տարածքներ՝ խաղաղության դիմաց» թեզը, այն չաշխատեց, քանի որ մեծացել է մի սերունդ, որը չի ցանկանում ապրել Մոսկվայից թելադրվող ռուսակենտրոն կամ էլ արեւմտամետ քաղաքականությամբ: Նա պորտալարը կտրել է բոլոր կախումներից եւ ուզում է ապրել անկախ ու հզոր Հայաստանում, սեփական ճակատագիրն իր ձեռքով կերտել... Անհրաժեշտություն է, որ հայկական Սփյուռքն իր անմիջական մասնակցությունն ունենա Հայրենիքի ներկայի ու վաղվա օրվա կերտմանը, միասին հաղթահարի բոլոր դժվարությունները, քանի որ սա բոլոր հայերիս հայրենիքն է. կա մեկ միասնական Հայաստան՝ Արցախ, Սփյուռք միասնությամբ շաղախված: Եթե Հայրենիքում կա խնդիր, ապա դա բոլորիս խնդիրն է, հետեւաբար՝ բոլոր հայերի միասնական շնքերն ու լուծում պահանջող:

Լիլիա ԲԱՂՅԱՆ

### Ապրիլին գնացինք Արցախ՝ ապրելու



Երգիչ, Արցախյան ազատամարտի մասնակից Սկրտիչ Սկրտչյանի հետ հանդիպում ենք Երեւանի սրճարաններից մեկում՝ իր 55-րդ տարեդարձի հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին: Երգերի միջոցով իր կյանքը վերապատմող Մակիչի հետ զրուցեցինք անմիջական ու երկար:

**- Լրացավ Ձեր 55-ամյակը: Ի՞նչ բանաձևով եք առաջնորդվել կյանքում:**

- Բանաձևեր չունեմ: Ապրել եմ այնպես, ինչպես կյանքն է թելադրել՝ համահունչ իմ ժողովրդի, ընկերների եւ հարազատների հետ:

**- Երգիչ, զինվոր, հայր. այս շարքը կարելի է երկար շարունակել: Սակայն ո՞վ է իրականում Սկրտիչ Սկրտչյանը:**

- Մարդ, ով ունի մասնագիտություն եւ որն օգտագործում է իր ժողովրդի համար:

**- Ձեր պարագայում՝ երգը ժառանգություն է, թե՞ ապրելաձև:**

- Ծնողներս երգում էին, ես էլ զարգացրել եմ ժառանգաբար ինձ փոխանցվածը:

Երգն ինձ շտկեց, դաստիարակեց: Այն միացնող է, իսկ մենք պարտավոր ենք միասնական լինել: Պարտավոր ենք, քանզի

մեր խնդիրները լուծված չեն: Ավելին՝ մեր ժողովուրդը միշտ պետք է կրի այդ մշակույթը:

**- Ասում են՝ բեմը խորան է երգչի համար: Ի՞նչ է բեմը Ձեր պարագայում:**

- Բեմն ուղղակի տեղ է, որտեղ երգում եմ: Ոչ մի մեծ բեմում երգելու բավականությունը չի կարող համեմատվել ընկերներիս համար մի սեղանի շուրջ երգելու հետ: Մարդու հոգին է խորան: Սիրտը սրտին տաս, ապրես ու ապրեցես:

**- Տարբերություն ունի՞ թե՞ ինչ հանդիսատեսի համար եք երգում:**

- Մենակ թե՛ հայ լինի հանդիսատեսը, որովհետեւ իմ երգերը հայության համար են: Եթե կարողանաս երգի միջոցով հանդիսատեսի գոնե 2 տոկոսն աշխատեցնես՝ ի նպաստ քո երկրի բարօրության, ուրեմն հաջողել ես:

**- Ի՞նչ եք երգում Ձեր զավակների համար:**

- Տանը չի ստացվում: Համ էլ՝ տեխնիկան այնքան է զարգացել, որ իրենք ամբողջ օրն ինձ են լսում: Նույնիսկ՝ արդեն հոգնել եմ ինքս ինձ լսելուց/ժպտում եմ:

**- Ի՞նչ է հայրենիքը Ձեզ համար:**

- Կարծում եմ՝ հայրենիքը յուրաքանչյուր ազգի, հատկապես հայերիս ապրելու հնարավորությունն է, որից չենք կարող, չպետք է բաժանվենք:

Փոքրիկ հայրենիք է նաեւ ընտանիքը: Եթե մենք կարողանում ենք ազնիվ երեխա դաստիարակել՝ անկաշառ եւ պատվով, նշանակում է, որ հայրենիքի մտածողությունն ու ապրելակերպն ենք փոխանցում: Մենք այնքան պետք է ազնիվ ու շիտակ լինենք, որ կարողանանք մեր հարեւանի երեխան մերը համարել:

**- Ի՞նչ ոգով եք 1988-ին եւ 2016-ին մեկնել պատերազմի:**

- 1988-ին մարտի դաշտ մեկնեցինք հայրենիքի նկատմամբ պարտականության զգացումով: Պահը մերն էր: Մենք էլ գիտեինք, թե ինչ պետք է անենք, եւ կռվում էինք խենթի պես: Ու բախտը ժպտաց

մեզ:

Իսկ ապրիլին հասկացա, որ անկախության 25 տարիները չեմ ապրել: Պատերազմի չորս տարիների արժեքը շատ մեծ էր, եւ միանգամից, առանց վարանելու ապրիլին գնացինք Արցախ՝ ապրելու: Հայրենիք պաշտպանելուց հրաշք բան չկա:

Ռոմանտիզմը հասցրեց մեզ մարտի դաշտ եւ փոխեց մեր կյանքը, գաղափարը, ցանկությունը:

**- Ի՞նչն էր 1988-ի հաղթանակի գրավականը:**

- Մեր ժողովուրդը: Սակայն հայերս շատ դժվար խառնվածք ունենք: Մենք կարող ենք երկիր ազատագրել, բայց, միեւնույն ժամանակ, ինքներս կործանել այն: Նայած թե ում կողքին ենք:

Եթե ժողովուրդն ընտրի ազգին, ուրեմն կազմակերպված է եւ հաղթանակած: Բայց մեր ժողովուրդը լքեց ազգին եւ գնաց մի կտոր հացի ճանապարհով: Խաղաղ 25 տարիների ընթացքում մենք հանդուրժեցինք եւ մասնակից դարձանք մեր երկրի կործանմանը:

Պետք է հասնենք նրան, որ սթափ գիտակցությունը մեզ խաղաղ ժամանակ էլ առաջնորդի:

**- Ապրիլյան պատերազմից հետո ի՞նչ զգացողություններով եք հետ եկել:**

- Հպարտությունով, քանի որ մենք կարողանում ենք մեզ պաշտպանել: Մենք պատվով հետ շարժեցինք թշնամուն՝ գեներալայի եւ նվիրվածության շնորհիվ: Բայց ապրիլին ստացած դասը շատ կարեւոր էր:

Մարդիկ լծվեցին աշխատանքի: Կարծում եմ՝ բավական բան փոխվեց եւ դեռ փոխվում է: Ժամանակն առաջ է ընթանում, պետություններն օրեցօր զարգանում են, մենք էլ պետք է համահունչ քայլեր: Եթե մենք հավասարը հավասարի քայլերից մյուսների հետ, ոչ մի խնդիր չենք ունենա:

Ով ինչով կարող է՝ պետք է օժանդակի

այս երկրի կայացմանը: Պետք է անենք:

**- Երգում էիք այդ օրերին:**

- Առանց երգելու չէր լինում:

**- Ինչը՞ միավորեց ձեզ եւ Դաշնակցությունը:**

- Դաշնակցությունը մի կանգամ է, որը հնարավոր չէ լքել եւ չսիրել: Այնտեղ ապրում ես պետության համար, հասարակության համար, արժանապատվության համար:

Դաշնակցությունն իր ուժը ցույց է տալիս այն ժամանակ, երբ իսկապես դրա կարիքը լինում է: Ժողովուրդը մի օր կհասնի այն գիտակցության, որ մեր ազգն ամենակարեւորն է, ու կապավիսի Դաշնակցությանը:

**- Ինչը՞ չէք հանդուրժում կյանքում:**

- Սուտը: Դա մեզ կործանում է:

**- Ո՞րն է Ձեր կյանքի ամենակարեւոր ձեռքբերումը:**

- Մարդիկ են իմ ձեռքբերումը: Ես երջանիկ մարդ եմ, քանի որ միշտ շրջապատված եմ եղել լավ մարդկանցով, ընկերներով, որոնք ինձ հասցրել են նրան, ինչ-որ կամ այսօր:

**- Երազանքներ ունե՞ք:**

- Սիրում եմ երազել, եւ կարծում եմ, որ յուրաքանչյուր մարդ, ով ունի երազանքներ, նպատակին կհասնի:

Միշտ սիրել եմ երեխաներին եւ երազել եմ մեծ ընտանիք ունենալ: Այսօր 5 երեխաների հայր եմ: Ծուռով ծովելու է 6-րդ զավակս: Երազանքի իրականացումից քաղոք բան չկա կյանքում:

**- Առաջիկայում ի՞նչ ծրագրեր ունեք:**

- Հիմա չեմ խոսի դրա մասին, հիմա ընթացքի մեջ է, եւ կարծում եմ՝ լավ կլինի:

**- Հավատո՞ւմ եք երկնայինին:**

- Պարտադիր չէ մտնել եկեղեցի հավատալու համար: Գլուխը բարձրացրեք եւ երկնքին նայեք: Այս անսահման տարածությունն ու մենք, մեր հողագունդը: Ո՞նց կարելի է չհավատալ: Միայն տգետ մարդը չի հավատում:

*Հարցազրույցը վարեց  
Լուսինե ԹԵՎՈՅԱՆԸ*

### Հավատի ու սպասման 24 տարիներ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի արցախյան առաքելության հետ համագործակցության շրջանակներում հանդիպում էր նախատեսված ԿԽՄԿ-ի տարբեր ծրագրերի մասնակիցների հետ, որոնց վրա հակամարտությունը ծանր հետքեր է թողել: Ծրագրի ընթացքում հանդիպեցինք Ջուլիետա Գասպարյանին, ով Արցախյան պատերազմի տարիներին ամուսնու եւ երկու երեխաների հետ վերադարձել է հայրենիք, ամուսնուն ճանապարհել մարտի ու մինչ օրս ապրում է հավատի ու սպասման մեջ:

Ամուսինը՝ Ժորա Օհանյանը, ծնունդով Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղից է: Ամուսնանալուց հետո տեղափոխվել է Ուզբեկիստանի Կոկանդ քաղաքը, որտեղ ապրել են 7 տարի: Արցախյան շարժման ծավալումից հետո, 1989թ. կնոջ եւ երեխաների հետ վերադարձել է Արցախ: Մասնակցել է Մարտակերտի, Կուբաթլուի, Փրջամալի, Նախիջեւանիկի, Մարտունու եւ այլ վայրերի ինքնապաշտպանական մարտերին: 1993թ. հունվարի 5-ին Զարվաճառի ազատագրման ժամանակ, Թազաքենդ գյուղում ծավալված մարտական գործությունների ընթացքում անհայտ կորել է: Այն ժամանակ որդին՝ Գեորգը, 8 տարեկան էր, աղջիկը՝ Գայանեն, 5 տարեկան:

«Դուստրն անընդհատ հարցնում էր, թե ինչո՞ւ են մնացածների հայրերը գալիս, իսկ իր հայրը չի վերադառնում», - հիշում է Ջուլիետա Գասպարյանը եւ նշում, որ չէր կարողանում ճշմարտությունն ասել. ասում էր, որ շուտով կգա եւ հետո թաքուն արտասվում: Այսպես շարունակվեց մինչեւ առաջին դասարան հաճախելը: Դարոցից վերադառնա-



լով՝ աղջիկը զարմացած հայտնում է, որ դարձրեցին զոհվածների ընտանիքների երեխաների գրքերն անվճար են տրամադրել, նաեւ իրեն էլ են անվճար տվել: Եվ տիկին Ջուլիետան ստիպված էր իրականությունն ասել: Իհարկե, երեխաների համար շատ դժվար էր ու ավե-

լի դժվար էր տիկին Ջուլիետայի համար, որովհետեւ ինքը պիտի լրացներ հոր պակասը, երեխաների համար լավ ապագա կառուցեր: Ուզբեկիստանում ապրած տարիներին դերձակ էր աշխատում, սակայն պատերազմի պայմաններում այդ գործն այնքան էլ պահանջված չէր, եւ աշխատանքի է անցնում քաղաքային շուկայում: Մինչեւ հիմա էլ, չնա-

տեղեկություններ են ստացել, որոնց իսկությունն ստուգելը շատ դժվար է: «Մինչեւ օրս էլ սպասում ենք, արդեն թռնակներ ունենք», - տիկին Ջուլիետան միշտ ներկա ժամանակով է խոսում ամուսնու մասին:

Այն ապրումները, որ տարել են ինքը, երեխաները, բառերով անհնար է արտահայտել: Ինչքան դժվար օրեր, չարչարանքներ է տեսել, մինչեւ կարողացել է երեխաներին մեծացնել, երկուսին էլ բարձրագույն կրթություն տալ: «Թվում է՝ լավ ապագա եմ տվել, բայց, միեւնույնն է, ինչքան էլ ձգտեմ ծնողական պարտականություններս անթերի կատարել, թվում է, թե ինչ-որ բան պակաս է: Հայրական քնքշանքը, հայրական դաստիարակությունն իմ երեխաները չեն ստացել», - ասում է տիկին Ջուլիետան:

Բայց միեւնույնն է, միշտ հոր ներկայությունն զգում են...

«24 տարի է անցել, բայց կարծես թե մեզ հետ է, ներկայությունը միշտ զգում ենք: Չենք կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ կարող է չգալ», - ասում է տիկին Ջուլիետան: Հատկապես տոն օրերին, Ժորայի ծննդյան օրը, երեխաների նշանվելու, հարսանիքի օրը միշտ մի թաքուն հույս ու հավատ է լինում, որ անպայման կգա. այդ օրը նա չի կարող բացակայել... → 6

### Աղջիկներ, որ կյանքեր փրկեցին



Պատերազմող երկրի կանայք... Երանք բառիս բուն իմաստով նվիրյալներ էին, նվիրյալներ, որ հարյուրավոր կյանքեր փրկեցին... Երանցից մեկն էլ Արիս Մարությանն է, բուժքույր, որին Արցախում բոլորն են ճանաչում:

«Սկսեցեք նրանից, որ ծնվել եմ Բաքվում, 1970 թվականին: Մայրս հիվանդ էր, շատ շուտով մահացավ: Հայրս մեզ վերցրեց, 1975-ին եկանք Ստեփանակետ: 10-րդ դպրոցն ավարտելուց հետո ընկերուհիներով որոշեցինք դիմել բժշկական ուսումնարան՝ ընդհանուր պրոֆիլի քույրեր դառնալ, սակայն ոչ-ոք չէր պատկերացնում, որ կսկսվի պատերազմը և մեր մասնագիտությունն այդքան անհրաժեշտ կդառնա: Ստեփանակետի դիպլոմատիկ կենտրոնում 1,5 տարի բուժքույր-լաբորանտ էի աշխատում, երբ պատերազմն սկսվեց: Հոսպիտալն այն ժամանակ տեղակայված էր մարզկոմի ներքնահարկում, իսկ 92-ի մայիսի վերջին՝ դիպլոմատիկ կենտրոնի ներքնահարկում: Դիմեցի հոսպիտալի գլխավոր բժիշկ Վալերի Մարությանին և ասացի, որ ուզում եմ աշխատել այնտեղ, այն էլ՝ վերակենդանացման բաժնում՝ անեսթեզիոլոգ թեկուզ այդ բնագավառում չէի աշխատել, բայց ասացի, որ կարող եմ:

Ինչ չգիտեի՝ իմ մոտ գրառումներ էի անում: Վիրավորների հոսքը մեծ էր, սովորում էինք ոտի վրա: Դեռ մի ամիս չանցած՝ գրառումներս դեմոնստրատիվ կերպով պատռեցի և ասացի, որ այն ինձ այլևս պետք չէ: Ուրիշներն այդ հմտությունները տարիներով էին ձեռք բերում, պատերազմը մեզ ստիպեց ամեն ինչի շուտ տիրապետել:

Այնուհետև վիրաբուժական բրիգադների կազմում մտքի բրիգադներ ստեղծեցինք, որոնց կազմում ընդգրկում էին վիրաբույժներ, օպերացիոն քույրեր, անեսթեզիոլոգներ, և գնում էինք ռազմի դաշտ: Այն վիրավորներին, որոնց կարողանում էինք, տեղում բժշկական օգնություն էինք ցույց տալիս, տեղում էինք ամեն ինչ կազմակերպում, ծանր հիվանդներին ուղարկում էինք քաղաք, իսկ ավելի ծանրերին ուղղաթիռով տեղափոխում էին Երեւան: Եթե հիվանդները տեղափոխության հետ կապված խնդիրներ էին ունենում, վիրահատում էինք դաշտային հոսպիտալներում: Եղել եմ Դրբոնում, Վանքում, Ֆիզուլիում, Ֆինկայում, ուսումնական-ռազմական ճամբարներում, Հորադիզի օպերացիային ենք մասնակցել: Այս աշխատել եմ կենտրոնական զինվորական հոսպիտալում: Ամենալավ բառերը կարելի է ասել կոլեկտիվի մասին՝ ընկերասիրություն, փոխօգնություն... ամենալավ մարդկային հատկանիշները դրսևորվում են այդպիսի էքստրեմալ պայմաններում: Դա ավելի շատ մի մեծ ընտանիքի էր նման, և առայսօր մենք կարոտախտ ունենք այն օրերի մեր հիշողությունների հանդեպ»:

Բուժքույր Արիսայի պես շատերն են կարողով հիշում պատերազմական այն դժվարին տարիներին ամենուր դրսևորվող մարդկային ջերմ հարաբերությունները, որը հաղթանակի գրավականներից մեկն էր. «Սա բոլորովին այլ կարգի ջերմություն էր, մենք կարող էինք ամիսներով իրար չհանդիպել, բայց անտեսանելի մի ուժ մեզ բոլորիս կապում էր և, անկախ հեռավորությունից (շատերն աշ-

խատում են Երեւանում կամ Ստեփանակետի այլ բուժօգնություններում), իրար հանդիպելիս ոնց որ հարազատի գրած լինեք: Բոլորի հետ շփվում եմ, մի բան պատահած լինելու դեպքում կարող եմ երկտող ուղարկել, և այն տարիների մեր մտերիներից որեւէ մեկը չի կարող հնարավոր ու անհնարին ամեն ինչ չանել օգնելու համար: Այն տարիների մեր մտերմությունն այլ կարգի բարձր էր՝ չէինք քնում, կարգին չէինք սևվում, բայց նվիրումն անսահման էր: Ինչ-որ մեկը հարազատ էր կորցնում՝ եղբայր, ծնող, ամուսին, բայց էլի վերադառնում էինք մեր առօրյային՝ վիրավորները մեզ էին սպասում, չէ՞ որ նրանք էլ ինչ-որ մեկի հայրը, ամուսինը, եղբայրն էին... Ոչ ոք չէր ասում՝ չեմ գնում դաշտային հոսպի-



տալի աշխատանքներին մասնակցելու: Հիշում եմ բուժքույրեր Նաիրա Իսրայելյանին, Ջուլիա Խաչատրյանին, Լիդա Աղաբեկյանին, Սվետա Աբրահամյանին, Ֆլորա Հակոբջանյանին, Գայանե Հայրապետյանին... Վաղամեռիկ Հասմիկին եմ հիշում, որ մնաց հանրակացարանի փլատակների տակ: Երբ պառկում էինք քնելու, նա ասում էր. «Եթե մի բան պատահելու լինի, թող ինձ պատահի, որովհետև դու եղբայր ես կորցրել (Բեկոր-Աշոտին)... Եթե հանկարծ ինձ մի բան պա-

տահի, գեղեցիկ կներկեք, սիրուն կհագցնեք ու հետո թաղեք... Սակայն նա փլատակների տակ էր մնացել, այնպես էր դեմքը աղավաղել, որ... Այնքան ծանր տարա այդ դեպքը, որ առավոտյան ինձ համար դժվար էր առանց նրա մտնել վերակենդանացման բաժին... Տարիներ հետո մի սայլակավոր տղայի հանդիպեցի, հարցրեց՝ չճանաչեցի՞ր, ասացի՝ ոչ, պատասխանեց՝ դուք ինձ բուժեցիք 92 թվականին... Բոլորի մոտ այն պատկերացումը կար, որ եթե հասնի զինվորական հոսպիտալ, ուրեմն ապրելու է՝ անկախ ամեն ինչից:

20 տարի աշխատելով կենտրոնական զինվորական հոսպիտալում՝ Արիսն զինվորական թոշակի անցավ տարիների վաստակով: 2014 թվականի մարտից

աշխատում է Հանրապետական բժշկական կենտրոնի շտապ օգնության բաժանմունքում որպես ավագ բուժքույր:

Արիսն համետտորեն լռեց իր մարտական վաստակի համար արժանացած մեդալների ու բազմաթիվ պարգևների մասին, միայն իմացա, որ արժանացել է «Գարեգի Նժդեհ», «Մարտական ծառայություն», «Վազգեն Սարգսյան», «Մայրական երախտագիտություն» մեդալների:

Լիլիա ԲԱՂՐՅԱՆ

### Հավատի ու սպասման 24 տարիներ

#### 5 ← Կարմիր խաչի աջակցությունը

«Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անհայտ կորածների ընտանիքները, ի համեմատ այլ ընտանիքների, ավելի շատ են մեկուսացված հասարակությունից, որովհետև նրանք տառապում են լրիվ ուրիշ ցավով. անընդհատ սպասման մեջ են, և իրենց թվում է, թե իրենց ցավը ոչ մեկը չի կարող հասկանալ»,- նշում է ԼՂՀ-ում Կարմիր խաչի առաքելության տեղեկատվական բաժնի պետ Էտերի Մուսայելյանը և ավելացնում, որ այդպիսի մարդիկ տնից դուրս չեն գալիս, չեն շփվում հարեանների, հարազատների հետ. ցավը կարծես տարանջատել է նրանց հասարակությունից: Դրա համար էլ ծրագրի սկզբում սկսել են նույն տեղում ապրող նմանատիպ ընտանիքների իրար հետ ծանոթացնել:

«Մեր նպատակն է եղել՝ սոցիալ-հոգեբանական ծրագրի շրջանակներում օգնել ընտանիքներին նորից «հետ վերադառնալ» հասարակություն»,- ասում է Էտերի Մուսայելյանը: Այո, խնդիրը չի լուծվել, բայց կյանքը շարունակվում է և պետք է ապրել: Այդ ընտանիքները կորցրել են տան տղամարդուն, որն ընտանիքի համար ապրուստի միջոցներ հայթայթողն է: Հատկապես այն տարիներին,

երբ նույնիսկ տղամարդ ունեցող ընտանիքներն էին վատ ապրում, այդ կանանց վիճակը շատ ծանր էր: Մի կողմից հոգեկան ծանր ապրումները, մյուս կողմից ծանր սոցիալական վիճակը: «Դրա համար հոգեբանական ծրագրին



գուզահեռ հայտնաբերել ենք ծանր սոցիալ-տնտեսական վիճակում գտնվող ընտանիքներին և փորձել տարբեր միկրոտնտեսական մանր բիզնես-ծրագրերի միջոցով ընտանիքի համար հավելյալ

եկամուտի աղբյուր ստեղծել»,- ասում է Կարմիր խաչի առաքելության տեղեկատվական բաժնի պետը:

Ի դեպ, Արցախի 370-ից ավելի անհայտ կորածների ավելի քան 160 ընտանիք օգտվել է ծրագրից:

«Տարբեր ընտանիքների հետ հանդիպումները որոշ չափով օգնում է, մի քանի ժամով կտրվում են հոգսերից: Գործը, հոգսը, լավ ու վատ ապրումները մի կողմ են դնում և այդ փոքր ժամանակը

նվիրում են քեզ: Տարբեր թեմաներով խոսելով՝ լիցքաթափվում, թեթեւանում են մի ժամով. ԿԽԿԿ-ի սոցիալ հոգեբանական ծրագրի մասին այսպես է արտահայտվել տիկին Ջուլիետան,- մենք այնքան ենք այս տարիներին այդ ծանրությունը մեր ուսերի վրա կրել, որ ավտոսացել ենք 5 րոպե կամ կես ժամ մեզ տրամադրել: Եվ, կարելի է ասել, թեկուզ չցանկանալով էլ՝ ծրագրին «ստիպել է», որ մի ժամով լիցքաթափվեք»:

Արցախյան պատերազմը, բացի ազատագրված հայրենիքից, անկախ պետությունից, շատերին անդամալի ցավ ու կորուստ է պատճառել: Այդ պատերազմում հանուն հաղթանակի իրենց կյանքը զոհաբերեցին հազարավոր հայրերի, սակայն նրանցից ոմանց ճակատագրերը մնացին անհայտ: Յուրաքանչյուր անհայտ ճակատագրի հետևում թաքնված է հարազատների հույսն ու սպասումը... Սպասում ենք, ու սպասումը գիշեր-ցերեկ չի հարցնում, սպասումը մեր սիրո, հավատի, ապրելու անբաժան, անքնին ուղեկիցն է: Անհայտ կորածները չունեցան շիրիմ, նրանց անվան վրա դաշված մնաց անհայտ կորածի խաչը:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

### Չարկերի վճարումը չպետք է ընկալվի որպես բեռ



*Չարկային համակարգն ամենադժվար փոփոխվող ոլորտներից է մեր երկրում: Չարկի առնելով Արցախի ստատուս քվոն՝ հենց հարկային դաշտի առաջարկած պայմաններն են նաև, որ շահագրգռում են արտաքին ներդրումներ ապահովել և բիզնես ստեղծել մեր երկրում: Որո՞նք են դաշտի այսօրվա գերակայությունները, բարեփոխումների թիրախում բիզնեսի ո՞ր հատվածն է, ո՞րն է դրանց հիմնական նպատակը: Չարկերի պատասխանները փորձեցինք ստանալ պատկան մարմնում՝ ֆինանսների նախարարի տեղակալ Արթուր Չարությունյանից:*

**- Պարոն Չարությունյան, հարկային օրենսդրությունը մշտապես բարեփոխվում է: Ո՞րն է նպատակը:**

- Վերջին տարիներին զգալի փոփոխություններ են կատարվել հարկային օրենսդրությունում, որոնց հիմնական նպատակը գործարարության եւ, հատկապես, փոքր եւ միջին ձեռնարկատիրության համար հարկման նպաստավոր պայմանների ապահովումն ու տնտեսության ռազմավարական նշանակության ճյուղերի խթանումն է: Միաժամանակ, հարկային համակարգը պետք է լինի ճկուն եւ համապատասխան տնտեսության զարգացումներին, քանի որ պայմանները, որոնք հրատապ են այսօր, կարող են վաղը կորցնել իրենց արդիականությունը: Արտոնությունները ոչ միայն տնտեսության զարգացման խթան են հանդիսանում, այլև երկարաժամկետ հեռանկարում ապահովելու են բյուջեի եկամուտների կայուն աճ:

**- Բարեփոխումներից ո՞րն է վերաբերում տնտեսության ամենախոցելի հատվածին՝ փոքր-միջին բիզնեսին:**

- Փոքր ու միջին բիզնեսը մշտապես զտնվում է պետության ուշադրության կենտրոնում: Այնտեղ սահմանված են եականորեն ցածր դրույքաչափեր եւ հարկման պարզեցված համակարգեր: Այսպես, սպասարկման ոլորտում գործունեություն իրականացնող փոքր տնտեսավարող սուբյեկտները հիմնականում

գործում են արտոնագրային եւ հաստատագրված վճարների հարկման համակարգերով: Այսօր շուրջ 820 ֆիզիկական անձինք եւ անհատ ձեռնարկատերեր, որոնք կազմում են գործող հարկ վճարողների շուրջ 15 տոկոսը, համարվում են արտոնագրային վճար վճարողներ, որոնց պարտավորությունները սահմանափակվում են միայն արտոնագրային վճարների վճարմամբ՝ առանց հարկային մարմիններին հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելու պահանջի: Այս տարվա հունվարի 1-ից մի շարք գործունեության տեսակներ, որոնք մինչ այդ հարկվում էին ընդհանուր հարկման համակարգով, եւս ներառվել են արտոնագրային եւ հաստատագրված վճարների հարկման դաշտում: Շատ

կարեւոր ենք համարում նաեւ 2016 թվականի ապրիլի 1-ից իրականացված փոփոխությունները, որոնք պայմանավորված են ապրիլյան պատերազմական գործողությունների հետեւանքով մի շարք ոլորտներում հարկ վճարողների եկամուտների նվազմամբ: Ըստ այդմ, հաստատագրված եւ արտոնագրային վճարները ստացվող եկամուտների մեծությամբ դարձնելու նպատակով, Եականորեն նվազեցվել են դրանց չափերը: Մասնավորապես, 2016 թվականի ապրիլ ամսից սկսած շրջաններում գործող հարկ վճարողները վճարում են սահմանված հաստատագրված եւ արտոնագրային վճարների գումարի ընդամենը 30 տոկոսը (կիրառվում է 0.3 նվազեցվող գործակից), իսկ Ստեփանակերտ քաղաքում գործող հարկ վճարողները՝ 60 տոկոսը (կիրառվում է 0.6 նվազեցվող գործակից): Ոլորտի կայացման գործում հատկապես Եական նշանակություն ունի 2016 թվականի հունվարի 1-ից սկսված բիզնեսի համար ժամկետային արտոնությունների սահմանումը: Մասնավորապես, գործունեությունը նոր սկսող հարկ վճարողները եռամսյա ժամկետով ազատվում են առեւտրի հարկի, հաստատագրված եւ արտոնագրային վճարների հաշվարկման եւ վճարման պարտավորությունից: Արդյունքում ունենում են տնտեսված միջոցներ, որոնք էլ կարող են ուղղվել բիզնեսի զարգացմանը, այսինքն՝ արտոնության կիրառումը նաեւ գործունեության սկզբնական փուլում որոշակիորեն նվազեցնում է գործարարության ռիսկայնության մակարդակը՝ նպաստելով շուկայում հարկ վճարողների կայացմանը:

**- Խոսենք փոքր եւ միջին ձեռնարկատիրության նկատմամբ իրականացվող հարկային հսկողությունից: Ի՞նչ մոտեցումներ են ցուցաբերվում:**

- Նախ ասեմ, որ վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է ստուգումների քանակը, հատկապես՝ փոքր տնտեսավարող սուբյեկտների մոտ: Մասնավորապես, ընդհանուր մասսայական ստու-

գումների փոխարեն իրականացվում են հասցեական ստուգումներ, որոնք հիմնված են ռիսկային չափանիշների վրա, իսկ նման ռիսկերը հայտնաբերվում են վերլուծությունների եւ կամերալ ուսումնասիրությունների արդյունքում, երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների եւ այլ չափանիշների հիման վրա: Բացի այդ, սկսված բիզնեսին չխոչընդոտելու նպատակով, առաջին մեկ տարվա ընթացքում մենք ձեռնպահ ենք մնում ստուգումների իրականացումից, փոխարենը՝ պարբերաբար այցելություններ ենք կազմակերպում վերջիններիս մոտ՝ հարկային օրենսդրության իրազեկման, օժանդակման նպատակով տրամադրելով նաեւ հարկման համապատասխան ռեժիմների վերաբերյալ ուղեցույցներ, որոնցում պարունակվող տեղեկատվության իմացությունը բիզնեսն արդյունավետ կազմակերպելու եւ հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է: Հիմնականում ստուգումներ չեն իրականացվում նաեւ արտոնագրային վճարներով հարկվող հարկ վճարողների մոտ:

**- Չարկատուները որքանո՞վ են իրագեղ սոր բարեփոխումներին:**

- Մեր հասարակությունում հարկային մարմինը նույնականացվում է միայն բյուջեի մուտքեր հավաքագրող կառույցի հետ, մինչդեռ այն պետք է ընկալվի նաեւ որպես սպասարկման եւ իրազեկման ծառայություններ մատուցող մարմին: Այդ նպատակով վերջին տարիներին հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնումը հարկային համակարգում առաջնահերթ խնդիր է համարվում: Չարկ վճարողների իրազեկվածությունն ապահովելու նպատակով օգտագործում ենք հնարավոր բոլոր միջոցները: Մասնավորապես, օրենսդրական եւ ենթօրենսդրական դրույթների իրազեկման, էլեկտրոնային եղանակով հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման եւ մի շարք այլ թեմաներով պարբերաբար կազմակերպվում են սեմինար-խորհրդակցություններ շրջկենտրոններում եւ Ստեփանակերտ քաղաքում: Իրազեկում ենք նաեւ հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով: Ամենամսյա պարբերականությամբ հրապարակվում են նաեւ հարկ վճարողների կողմից առավել հաճախակի հնչեցրած հարցադրումներն ու դրանց պատասխանները, որպեսզի նմանատիպ խնդիրներին առնչվող հարկ վճարողները խուսափեն հետագա սխալներից: Չարկ վճարողները պարզաբանումներ կարող են ստանալ նաեւ գրավոր եւ բանավոր հարցադրումների միջոցով եւ կայքէջի առցանց ռեժիմով: 2016թ. դեկտեմբեր ամսից գործարկվել է նաեւ «Skype» հեռաձայնային ծառայությունը, որի միջոցով եւս հարկ վճարողները, ինչպես նաեւ Արցախում ներդրումներ կատարելու պատրաստակամություն ունեցող գործարարները եւ հարկային ոլորտով հետաքրքրվող այլ անձինք ցանկացած կետից մասնագետին կարող են հղել հարկային օրենսդ-

րությանը վերաբերող իրենց հետաքրքրող հարցերը եւ օպերատիվ կարգով ստանալ դրանց պատասխանները:

**- Բարեխիղճ հարկ վճարողների նկատմամբ խրախուսման ի՞նչ մեխանիզմներ են կիրառվում:**

- Այսօր մեր գերնպատակն է՝ հարկատու-հարկային մարմին փոխհարաբերությունների ամուր դաշտի ստեղծմամբ, կառուցողական երկխոսության ճանապարհով հարկ վճարողների շրջանում ձեւավորել հարկերի ինքնուրույն եւ ճիշտ հաշվարկման ու վճարման մշակույթը: Այդ առումով, աշխատում ենք պահպանել գործընկերային հարաբերություններ իրենց հարկային պարտականությունները բարեխղճորեն կատարող հարկ վճարողների հետ՝ նվազագույնի հասցնելով հսկողական միջոցառումները: Օրերս ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է նաեւ «Օրինապահ հարկ վճարողներ»-ի ցանկերի ձեւավորման կարգը, որի գործողությամբ այն հարկ վճարողները, որոնք կայուն կարգապահ վարքագիծ են ցուցաբերում, այսինքն՝ ժամանակին կատարում են բյուջեի հանդեպ պարտավորությունները, ներկայացնում օրենսդրությամբ նախատեսված հաշվարկները՝ արտացոլելով ճշգրիտ ցուցանիշներ, ժամանակին արձագանքում են հարկային մարմնի կողմից իրականացված կամերալ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացմանը, կստանան օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ: Նրանց կտրամադրվեն հավաստագրեր եւ ըստ այդմ կկիրառվի մեղմ ու աննկատ հարկային վարչարարություն: Մեր հասարակությունը կտեղեկացվի նման հարկ վճարողների մասին, եւ դա, կարծում եմ, խթան կհանդիսանա նաեւ մյուս հարկ վճարողների համար՝ հարկային պարտավորությունները բարեխղճորեն կատարելու առումով: Այս գործողություններով մենք ձգտում ենք հարկատուների շրջանում ձեւավորել հարկային կարգապահություն եւ պատասխանատվության զգացում՝ պետության հանդեպ իրենց պարտավորությունների կատարման ուղղությամբ: Այսօր մեր երկրում կան բազմաթիվ սոցիալ-տնտեսական ծրագրեր, որոնք իրականացումը պահանջում է ֆինանսական միջոցներ, որն էլ անմիջականորեն կապված է բյուջեի եկամուտների ապահովման հետ: Այս պարագայում խիստ կարեւոր է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ աջակից լինի հարկերի հավաքագրման գործընթացին: Չարկերի վճարումը հասարակության շրջանում չպետք է ընկալվի որպես լրացուցիչ բեռ, հասարակությունը պետք է ակնհայտ բացասական վերաբերմունք ցուցաբերի հարկերի վճարումից չարամտորեն խուսափողների նկատմամբ: Միայն այս պարագայում մենք կունենանք կայուն ու զարգացած տնտեսություն՝ ապահովելով մեր երկրի տնտեսական անվտանգությունը:

Նոնա ԳԵՎՈՐԳՅԱՆ

### Առողջ եվ ամուր սերունդ՝ հզոր հայրենիք



Արցախում գործող մի շարք մարզական ֆեդերացիաների կողքին հայտնվեց մարտարվեստի նոր՝ Վինգզոնի և թայջի ֆեդերացիան, որը պետականորեն հաստատվելով մարտ ամուր՝ սկսեց կյանքի կոչել մատաղ սերնդի առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը նպաստող ժամանակահատված ծրագրեր ու գաղափարներ: Արցախի Վինգզոնի և թայջի ֆեդերացիայի հիմնադիրն ու նախագահն է ՀՅԱԿ (Հայ սեւ գոտիների ակադեմիա) միջազգային կարգի ուշուի (սեւ գոտի) մարզիչ, ուշու-բունգֆու մարտարվեստի գանազան ոճերի գիտակ-մասնագետ Սայաթ Բաղդասարյանը: Նորաստեղծ ֆեդերացիայի պարապմունքների ընթացքից, նպատակներից ու առաջիկա ծրագրերից տեղեկացանք ֆեդերացիայի անդամ, Վինգզոնի ավագ խմբի փորձառու մարզիկ Շահեն Կարապետյանից:

**- Շահեն, կներկայացնե՞ք քանի մարզիկ է կոփվում նորաստեղծ ֆեդերացիայի ներքո եւ ի՞նչ տարիքային խմբեր կան:**

- Այսօրվա տվյալներով ֆեդերացիայում կա 22 մարզիկ, բայց մարզիկների քանակը պարբերաբար ավելանում է, ինչը ողջունելի է: Նշեմ, որ ունենք մինչեւ 16 տարեկան մարզիկների խումբ, իսկ ավագ խումբը համալրում են 16 եւ բարձր տարիքի մարզիկներ:

**- Կարո՞ղ եք պարզաբանել, թե ինչ նպատակ կա Վինգզոնի և թայջի ֆեդերացիայի հիմնում եւ ո՞ր տարիքն է հարմար պարապել սկսելու համար:**

- Վինգզոնը և թայջին ուշուի ավանդական ոճեր են, որոնք խոր արմատներ ունեն Չինաստանում, իսկ Վինգզոնը՝ նաեւ Կորեայում, եւ որոնք լայն կիրառում ունեն ամբողջ աշխարհում: Կան բազմաթիվ հզոր դպրոցներ, որտեղ վինգզոնը դասավանդվում է որպես արդյունավետ ինքնապաշտպանության միջոց: Վինգզոնի հնարները տարբեր երկրներում օգտագործվում են ոստիկանության աշխատակիցների, հատուկ ջոկատայինների եւ բանակայինների նախապատրաստական զորավարություններում: Արցախում եւս վինգզոնը արդիական է: Արդեն յոթերորդ տարին է՝ այն դասա-

վանդվում է հմուտ մարզիչ Սայաթ Բաղդասարյանի կողմից: Միավորվելով ֆեդերացիայում՝ նպատակ ունենք մարտարվեստի վինգզոն և թայջի ոճերը մասսայականացնել Արցախում, մարզական կազմը ընդլայնել եւ ավելի շատ նախագորակոչային տարիքի մարզիկներ ներգրավել՝ հայրենիքի պաշտպանությանը ֆիզիկապես եւ հոգեպես նախապատրաստելու նպատակով, իսկ սիրողակ-մարզիկները այսուհետեւ հնարավորություն կունենան մասնագիտակալ մարտարվեստում: Մեր ֆեդերացիայում ընդունելության հետ կապված տարիքային սահմանափակումներ չկան: Ընդունում ենք հիվազ տարեկանից՝ տղաներ եւ աղջիկներ: Պարզ է, որ հիվազ կամ վեց տարեկան երեխան դեռեւս չի կարող յուրացնել մարտարվեստի բարդ տեխնիկան, բայց այդ հասակում ընդունելությունը հատկանշական է նրանով, որ երեխան վաղ հասակից աղապտացվում է կարգապահության, կոլեկտիվում իրեն դրսևորելուն, մկանների աճի եւ զարգացման գործընթացում կարեւորագույն նշանակություն ունեցող ֆիզիկական վարժությունների որոշ էլեմենտներ է կատարում, փոխառում է մարզչի ունակությունները եւ ընտելանում է պարապմունքի մթնոլորտին: Յուրաքանչյուր մարզիկի հանդեպ ցուցաբերվում է անհատական մոտեցում՝ աստիճանաբար փոխանցելով հարվածային ու պաշտպանական տեխնիկան: Ընդունվում են նաեւ ավելի բարձր տարիքի մարզիկներ, եթե նույնիսկ ֆիզիկական պատրաստվածություն չունեն: Այդ դեպքում վինգզոնի տեխնիկան, սանդա ոճի եւ այլ ոճերի հնարներ փոխանցվում են ֆիզիկական ակտիվ կոփմանը զուգընթաց:

**- Իսկ ի՞նչ կատեգորիայի մասին, այդ երկու ոճերը լրացնո՞ւմ են միմյան:**

- Վինգզոնն ու թայջին միանգամայն տարբեր ոճեր են, բայց մտնում են ուշուի ընդհանուր համակարգի մեջ: Եթե վինգզոնը յուրացնելու համար պահանջվում է արագություն, կտրուկություն, շարժումների մեջ ճշգրտություն, ապա թայջիի համար անհրաժեշտ է կատարյալ հանգստություն, շարժումների սահունություն, խաղաղություն եւ ներդաշնակություն: Թայջիի առողջարար շնչառական վարժությունների համակարգը նպաստում է մարզիկի առողջությանը, շնչառական օրգանների լավ աշխատանքին: Թայջին հիմնականում փոխանցվում է հատուկ տարիքի մարզիկներին, սակայն եթե վինգզոն պարապող մեր սաները ժամանակի տեսակետից հասցնեն նաեւ թայջի պարապել, ապա նրանք կրկնակի կշահեն: Լինել հոգեպես հանգիստ, ներդաշնակ, առողջ շնչառական համակարգ ունենալ: սրանք մարզիկի համար կարեւոր հատկություններ են:

**- Ի՞նչ հատկություններ է զարգացնում վինգզոնը մարզիկի մեջ:**

Նալ ակնկալողը ավելի շուտ դժվար վիճակում կհայտնվի. բացառված չէ, որ ունեցածն էլ կորցնի:  
 Ամեն մարդու երջանիկ լինելու նախադրյալը Աստծո կողմից է տրված լինում...  
 Շահամուլ, ագահ մարդիկ ավելի հաճախ են իրենց շահամուլության զոհը դառնում:  
 Այնտեղ, որտեղ անվտանգության երաշխիք չկա, բարիք չեն որոնում:  
 Պատահում է՝ հույսն էլ է հուսահատվում,

- Նրանք, ովքեր պարապում են վինգզոն, դառնում են առողջ, եռանդուն, վստահ, ուժեղ: Վինգզոնում մարտն ընթանում է հակառակորդից շատ մոտ հեռավորության վրա, նրան հպվելու միջոցով՝ զգալով եւ կանխատեսելով նրա շարժումները, պաշտպանությունից ակնթաթորել հակահարձակման անցնելով եւ կասեցնելով նրա շարժումները: Վինգզոնիստը սովորում է ոչ թե փախչել, այլ դեմառդեմ դուրս գալ վտանգի հետ եւ առաջին հայացքից անելանելի թվացող վիճակում պահպանել սառնասրտություն, հանգստություն եւ գտնել օպտիմալ ելք: Այդ մտածելակերպը գործում է նաեւ վինգզոնիստի առօրյա կյանքում: Փամփուշտների, զենքի գործածման մեր օրերում դժվար թե մարտիկը հակառակորդի դեմ ձեռնամարտի դուրս գա, չնայած դա էլ չի բացառվում, այնուամենայնիվ վինգզոնիստի հոգեբանական պատրաստվածությունը, որին մեծ ուշադրություն է դարձվում պարապմունքների ժամանակ, վեր է հանվում ամենուր, ցանկացած բախումնային իրավիճակում՝ մարտադաշտում, ռինգում, փողոցային անխուսափելի մարտում, մարդկային բոլոր գործառնություններում:

**- Ինչքա՞ն ժամանակ է պահանջվում վինգզոնը յուրացնելու համար:**

- Վինգզոնի տեխնիկան բարդ է եւ ուսուցման տեսանկյունից՝ ժամանակատար: Եթե այն համեմատենք օրինակ բոքսի կամ թաեվոնդոյի հետ, ապա կնկատենք, որ դրանք յուրացնելու եւ ռինգ դուրս գալու համար միջինում վեց ամսից մի տարին էլ է բավական, իսկ վինգզոնը յուրացնելու համար եռակի, քառակի ժամանակ է պահանջվում: Վինգզոնը լրիվությամբ ուսումնասիրելու եւ տիրապետելու համար միջազգային ծրագրով սահմանված վեց կարգ կա, որը պահանջում է անդադար համառ աշխատանք: Նշեմ, որ մեր ֆեդերացիայի կանոնակարգը համապատասխանում է ՀՀ եւ միջազգային չափորոշիչներին, մենք համագործակցում ենք ՀՀ մարտարվեստների տարբեր ֆեդերացիաների հետ, այդպիսով հնարավորություն ստեղծելով մեր սաների համար՝ քննություն հանձնելու միջազգային ստանդարտներին համապատասխան, միջազգային կարգի որակավորում ստանալու եւ մասնակցելու վինգզոնի գանազան մրցաշարերի ինչպես հայրենիքում, այնպես էլ արտերկրում՝ այդպիսով բարձր պահելով Արցախի պատիվը:

**- Ի՞նչ ծրագրեր կան առաջիկայում:**

- Ծրագրեր ու նպատակներ շատ կան, որոնք իրագործելու համար նորաստեղծ մեր ֆեդերացիան երկար ճանապարհ ունի անցնելու: Օրերս հրավեր ենք ստացել ՀՀ ավանդական ուշուի ֆեդերացիայից մայիսի 13-16-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայանալիք Եվրոպայի Քունգֆուի (Ավանդական ուշուի) 4-րդ եւ Վինգզոնի 2-րդ առաջնությանը մասնակցելու համար: Ար-

ցախից կմեկնեն ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Սայաթ Բաղդասարյանը (18-40 տ.խ.) եւ ֆեդերացիայի մարզիկ Կարո Սարգսյանը (65-70 կգ ք.կ, մեծահասակների տարիքային խումբ), ովքեր ՀՀ կազմում հանդես կգան տարբեր ոճային կարգերում: Սա առաջին դեպքն է, երբ վինգզոն մարտարվեստից միջազգային մրցաշարի կմասնակցեն արցախցի մարզիկներ:

**- Շահեն, արդեն յոթերորդ տարին է՝ ակտիվ պարապում եք վինգզոն, ավագ խմբի առաջին խանդավառ-մարզիկն եք եւ ֆեդերացիայի պատվավոր անդամ: Այս տարիները ինչո՞վ եք նշանավորում եւ միգուցե մտադրություն ունե՞ք մարտարվեստում Ձեր ունեցած սիրողական գիտելիքները վերածել մասնագիտականի:**

- Կյանքում մի պահ եկավ, երբ պետք էր զբաղվել իմ առողջությամբ եւ նպատակային համարեցի մարտարվեստով զբաղվել՝ համատեղելով օգտակարը հաճելիի հետ: Պարբերաբար հետաքրքրվում էի, թե ինչ մարզածեներ ու մարտարվեստի խմբակներ կան: Ինձ համար կարեւոր էր բանիմաց մարզիչ գտնել, քանի որ պարապմունքի արդյունավետության զգալի մասը մարզչից է կախված: Հանձին Սայաթ Բաղդասարյանի՝ գտա այն արհեստավարժ մարզչին, ում հետ հաճելի է պարապել, ում կարելի է վստահել, ումից կարելի է արժեքավոր խորհուրդներ ստանալ տարբեր հարցերով եւ ով լիովին համապատասխանում է իմ պահանջներին: Այս տարիները ապարդյուն չանցան եւ նշանավորվում են նրանով, որ վինգզոնի մարզական համակարգը միանգամայն դրական ազդեցություն ունեցավ իմ ֆիզիկական եւ հոգեբանական պատրաստվածության վրա՝ դարձնելով առողջ, հուզակայուն, զարգացնելով իմ մեջ վստահություն, արագ ռեակցիա: Առաջարկ եւ ցանկություն կա մասնագիտանալու նախընտրած մարտարվեստի մեջ եւ մարզական գործունեությամբ զբաղվելու, սակայն իմ մոտ առկա ժամանակի խնդիրը լուրջ խոչընդոտ է եւ դեռեւս համապատասխան լուծում չի ստացել:

Պետք է առանձնանշեմ, որ մեր ֆեդերացիայի ավագ խումբը համալրում են հասուն տարիքի կայացած մարզիկ, որոնց համար կարեւոր են առողջ կենսակերպը, մարտարվեստի միջոցով ինքնակատարելագործումը, ովքեր մեծ խանդավառությամբ են մոտենում հետաքրքիր ծրագրերի իրագործմանը՝ արշավներ, մտերմիկ հավաքույթներ, որոնք դրական են ազդում պարապմունքի ընթացքի եւ ներխմբային փոխհարաբերությունների վրա: Արցախի Վինգզոնի և թայջի ֆեդերացիայում պարապմունքները բաց են բոլորի համար, իսկ անձնակազմը պատրաստ է աջակցել յուրաքանչյուր դիմորդի:

*Հարցազրույցը՝ Սոնյա ԱՎԱԳՅԱՆԻ*

### Աֆորիզմներ

Կյանքի փորձը նրանց է սովորեցնում, ովքեր սովորելու ընդունակ են ու ձգտում ունեն:  
 \*\*\*  
 Զանդակելու, նկարելու ստեղծագործելու տաղանդ տրվում է ոչ բոլորին: Ծշմարիտ, անբասիր սերը նույնպես տաղանդ է, որ տրվում է ոչ բոլորին:  
 \*\*\*  
 Ծնողների ապրելակերպը երեխաների համար երբեմն ոչ թե օրինակելի, այլ խիստ դատապարտելի է լինում:  
 \*\*\*  
 Անազնիվ ճանապարհով շուտ հարստա-

բայց չի նահանջում:  
 \*\*\*  
 Մի հիմարի կատարած սխալի, վնասի համար երբեմն տասը խելոք են տանջվում, տառապում:  
 \*\*\*  
 Հարստություն ունեցողը՝ եթե բարեգործ է, վստահություն ու հեղինակություն էլ ունի, կրկնակի է հարուստ:  
 \*\*\*  
 Ստույգ տեղեկությունների փոխարեն ենթադրություններին հավատալը ոչ միայն միամտություն է, այլ նաեւ խիստ վնասակար:  
 \*\*\*

Հավատարիմ ենթակայի սուտը, կեղծիքը սովորաբար հոգատար շեֆի սուտ ու կեղծիքով են քողարկվում:  
 \*\*\*  
 Առաքնությունը պահպանվում է խղճի՝ գլխավոր վերահսկչի շնորհիվ:  
 \*\*\*  
 Հաճելի գրուցակիցը նա է, ով ասում է այն, ինչ հարկավոր է, այնքան, որքան հարկավոր է:  
 \*\*\*  
 Խաղաղությունն աշխարհի բոլոր ժողովուրդների հիմնական երազանքն է:  
 Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ